Azg Արգ

22 ՓԵՏՐՈՒԱՐ 2008 ՈՒՐԲԱԹ 34 (3928)

Ռուսաստանի նախագահի շնորհավորական ուղերձը

Հայաստանի նախագահական ընտրություններում տարած հաղթանակի առիթով ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանին ուղղված ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի շնորհավորական խոսքում մասնավորապես ասված է.

«Ռուսաստանում բարձր են գնահատում մեր երկրների միջև հաստատված վստահության, կառուցողական համագործակցության եւ փոխխստաստման հարաբերությունները: Դաշնակցային գործընկերության հետեւողական խորացումը լիովին համապատասխանում է Ռուսաստանի եւ Հայաստանի ժողովուրդների առաջատար շահերին, նպաստում է կայունության ամրապնդմանը Անդրկովկասում:

Բավարարվածության զգացումով եմ նշում Ձեր անձնական մեծ ներդումը ռուս-հայկական հարաբերությունների զարգացման գործում: Համոզված եմ, որ Ձեր գործունեությունը հայկական պետության ղեկավարի բարձր պատասխանում կնպաստի այդ հարաբերությունների հետագա առաջընթացին»:

Վերահաշվարկվում են մի շարք տեղամասերի արդյունքները

Արդեն կան շերեպալվածներ

Հայաստանի մի քանի ընտրատեղամասերում նախագահի թեկնածու Արթուր Բաղդասարյանի նախընտրական շտաբի պահանջով վերահաշվարկ է կատարվում: Դեռ նախորդ օրը տարածվել էր ՕԵԿ հայտարարությունը, որում 100-ից ավելի ընտրատեղամասերի արդյունքներն անվավեր համարելու պահանջ էր հնչել: Թե որքանով դա կարող է ազդել ընտրությունների վերջնական արդյունքների պատկերի վրա՝ դժվար է ասել, բայց երեկ, ելույթ ունենալով Ազատության հրապարակում, ՕԵԿ փոխնախագահ Հեղինե Բիշարյանն ասել է, թե ՕԵԿ շտաբն այդ հարցում հետեւողական է լինելու, իսկ կոնկրետ տեղամասերից մեկի՝ 9/31-ի արդյունքների էական փոփոխության մասին հայտարարել է հանրահավաքը վարող Նիկոլ Փաշինյանը:

Մենք զանգահարեցինք թիվ 9 ընտրատարածքի հանձնաժողովի նախագահ Եղիշե Տերտերյանին, որը հաստատեց ՕԵԿ-ից տեղամասային հանձնաժողովի անդամի պահանջով թիվ 9/30 եւ թիվ 9/31 ընտրատարածքներում վերահաշվարկների իրողությունը. առաջինում ըստ էության արդյունքների փոփոխություն տեղի չի ունեցել, երկրորդում քվեների թվի փոփոխություն է եղել, Տերտերյանի խոսքով՝ ավելացել են Վահան Հովհաննիսյանի, Վազգեն Մանուկյանի, Արթուր Բաղդասարյանի, Տիգրան Կարապետյանի քվեները, մի փոքր էլ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանինը: Թվային պատկերով Սերժ Սարգսյանի օգտին քվեարկել է ոչ թե 709 ընտրող, ինչպես հայտարարել էր պատասխանատու, այլ՝ 395, Վահան Հովհաննիսյանի քվեների արձանագրած 3 թիվը իրականում 120 է, Արթուր Բաղդասարյանի ձայները 134-ից դարձել են 184, Վազգեն Մանուկյանին ընտրողները ոչ թե 0 ձայն են տվել, այլ 57, Տիգրան Կարապետյանի ձայները կրկնապատկվել են, իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանի օգտին տրված քվեների թիվը պատասխանատու եղել է 376, վերահաշվարկից հետո դարձել է 392: Մյուս թեկնածուներին տրված քվեներում եւս փոփոխություններ կան:

Ընտրակեղծիքների մի քանի հեղինակներ ձերբակալվել են: (Մանրամասները՝ ստորեւ):

Հետաքրքրական է, որ երեկ Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի մամուլի պատասխանատու Էդուարդ Շարմազանովի տարածած հայտարարության մեջ այս եւ այլ ընտրատեղամասերում իրականացվող վերահաշվարկների մասին ասված է. «Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբը դատապարտում է բոլոր այն դեպքերը, որոնց ընթացքում կարգալի, որ ընտրական հանձնաժողովը միտումնավոր է խեղաթյուրել ընտրողների ազատ կամարտահայտության արդյունքը, անկախ նրանից, թե հօգուտ կամ ի վնաս ո՞ւմ է դա արվել: Մեր թեկնածու Սերժ Սարգսյանը հանիցս հայտարարել է, որ հետամուտ ենք լինելու ՀՀ նախագահական ընտրությունների գործընթացը օրենքի շրջանակներում կազմակերպելուն, ուստի բոլոր ընտրակեղծարարները պետք է կրեն օրենքով սահմանված պատիժ»:

Մ. Խ.

Երկրապահները վերահաստատել են իրենց դիրքորոշումը

Վստահելի աղբյուրներից հայտնի դարձավ, որ երեկ երեկոյան «Երկրապահ կամավորականների միության» հավաքի ժամանակ երկրապահները վերահաստատել են նախկինում ընդունած այն որոշումը, ըստ որի «Երկրապահ կամավորականների միությունը» նախագահական ընտրություններում կընդունի եւ կպաշտպանի ժողովրդի կայացրած որոշումը: Նույն աղբյուրը հաղորդել է, որ միության նախագահ, գեներալ Մանվել Գրիգորյանը եւ երկրապահների մյուս առաջնորդները արդեն շնորհավորել են Սերժ Սարգսյանին նախագահ ընտրվելու կապակցությամբ:

Վերահաշվարկ եւ ձերբակալություն

Երեկ վերահաշվարկ է կատարվել 34 ընտրատեղամասերում, պարզվել է, որ Երեւանի կենտրոնում գտնվող 9/31 տեղամասում էական խախտումներ են եղել: Մնացած 33 տեղամասերում խախտումներ չեն հայտնաբերվել կամ դրանք եղել են աննշան: Երեկ գլխավոր դատախազությունից հայտնեցին նաեւ, որ 9/31 տեղամասում հայտնաբերված խախտումների կապակցությամբ քրեական գործ է հարուցվել եւ ձերբակալվել է այդ տեղամասի ընտրական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանը: Դատախազությունը հայտնում է, որ «Երեւանի 9/31 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանը, նախագահի տեղակալ Ալվարդ Հովհաննիսյանը, քարտուղար Մարգարիտա Այվազյանը, հանձնաժողովի անդամներ Լեյլա Գրիգորյանը, Ռոզա Հովսեփյանը եւ այլք ՀՀ նախագահի 2008-ի փետրվարի 19-ի ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում մտցրել եւ իրենց ստորագրություններով հաստատել են ակնհայտ սխալ, աղավաղված տվյալներ՝ կեղծելով քվեարկության արդյունքները»:

Հայաստանի բնակչության թվաքանակը

Ըստ Հայաստանի Ազգային վիճակագրության ծառայության, 2008-ի հունվարի 1-ի դրությամբ մեր երկրի բնակչության թվաքանակը կազմում է 3 մլն 299,9 հազար մարդ: Քաղաքային բնակչությունը կազմում է 2 մլն 69,3 հազար մարդ, իսկ գյուղական բնակչությունը՝ 1 մլն 160,6 հազար մարդ: Երեւան քաղաքի բնակչությունը 1 մլն 107,7 հազար է:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանին

Մեծարգո պարոն Սերժ Սարգսյան

Մեծագույն գոհունակությամբ ընդունեցինք Հայաստանի Հանրապետության նախագահի պատասխանում Ձեր ընտրվելու փաստը:

Թույլ տվեք Համաէխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության անունից ջերմորեն շնորհավորել եւ ցանկանալ Ձեզ՝ որպես Հայաստանի Հանրապետության ղեկավարի, մեծ հաջողություններ Ձեր ծրագրերի իրականացման գործում՝ ուղղված երկրի սնանկության հետագա աճին, հայ ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը, հանրապետությունում կայունության, խաղաղության եւ համերաշխության մթնոլորտի ամրապնդմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքերի ամրապնդմանն ու Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ համագործակցության հետագա զարգացմանը:

Առողջություն եւ հաջողություն Ձեզ եւ Ձեր ընտանիքին:

Խորին հարգանքներով՝

ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ,
Համաէխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին

Մեծարգո պրն Ռոբերտ Քոչարյան

Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման 20-ամյակի կապակցությամբ Համաէխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության եւ անձամբ իմ անունից Ձեզ եմ հղում բարեմաղթանքներ՝ որպես այդ շարժման ամենաակտիվ գործիչներից մեկի:

Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժումը, հայրենիքի զավակների անձնվեր պայքարը, անկասկած նշանակալի ազդեցություն ունեցան հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման վրա, որի արդյունքը եղավ Լեռնային Ղարաբաղի Անկախ, Հանրապետության ստեղծումը: Հաստատեցին դա մեծ հնարավորություններ ստեղծեց տնտեսության զարգացման, Լեռնային Ղարաբաղում ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման համար, նպաստեց հայ ժողովրդի միասնության ամրապնդմանը: Մենք բարձր ենք գնահատում բոլոր նրանց լուսավոր հիշատակը, ովքեր իրենց կյանքը տվեցին հանուն համայն հայության հարազատ երկրամասի՝ Լեռնային Ղարաբաղի անկախության: Ընդգծելով Ձեր անձնական ներդումը Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման զարգացման գործում, ավելի քան վստահ եմք, որ ղարաբաղյան խնդրի խաղաղ եւ արդար կարգավորումը ձեռք կբերվի համաէխարհային հանրության եւ հայության ջանքերով:

ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ,
Համաէխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան

Շնորհավորական ուղերձները շարունակվում են

Սերժ Սարգսյանին շնորհավորական ուղերձներ են հղել նաեւ Եվրամիության ընդհանուր արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով գերագույն հանձնակատար Խավիեր Սոլանան, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յաապ դե Հոտ Սխեֆերը եւ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը: Սոլանայի շնորհավորական խոսքում մասնավորապես ասված է. «Ես ցանկանում եմ շնորհավորել Հայաստանի ժողովրդին՝ փետրվարի 19-ին մրցակցային նախագահական ընտրություններ անցկացնելու եւ մասնակցության բարձր աստիճանի համար»: Յաապ դե Հոտ Սխեֆերը հանդես է եկել հայտարարությամբ, որում ասված է. «Ես ոգեւորված եմ միջազգային դիտորդական առաքելության նպաստավոր եզրակացությամբ, որն արձանագրել է որոշակի առաջընթաց»: Գյուլը իր հերթին նշել է. «Թուրք ազգի եւ անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ ՀՀ նախագահ ընտրվելու կապակցությամբ: Հուսով եմ, որ Դուք Ձեր նոր պարտականությամբ կնպաստեք դարձ ի վեր խաղաղության եւ համերաշխության մեջ միմյանց կողքի ապրող հայ եւ թուրք ժողովուրդների հարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ մթնոլորտի ձեւավորմանը»:

ԱՄՆ դեսպանությունը հորդորում է

ԱՄՆ-ը Հայաստանում գտնվող իր քաղաքացիներին զգուշացրել է խուսափել Հայաստանում նախագահական ընտրությունների հետ կապված քաղաքական ցույցերից: Հայտարարության մեջ նշվում է, որ «նույնիսկ խաղաղ ցույցերը կարող են վերածվել բախումների եւ վերածել բռնության», միաժամանակ ընդգծվում է, որ «կենտրոնական պողոտաներում ընթացող ցույցերն ու երթերը առայժմ խաղաղ բնույթ են կրում»: Իր հերթին ԱՄՆ պետդեպարտամենտի խոսնակ Էդգար Վասկեսը մտահոգություն է հայտնել Հայաստանի նախագահական ընտրություններում ձայների հաշվարկման ժամանակ տեղ գտած խնդիրների մասին հաղորդումներով:

«Մենք դեռեւս ուսումնասիրում ենք ընտրությունների անցկացման վերաբերյալ մեր ստացած տարբեր զեկույցները», ասել է Վասկեսը:

Թուրքիայում ազգային փոքրամասնություններին վերադարձնում են իրենց գույքը

Թուրքիայի խորհրդարանը իր հերթական նիստում հաստատել է քրիստոնեական եւ հրեական փոքրամասնություններից ժամանակին պետության օգտին օտարված գույքը վերադարձնելու մասին օրենքը: Այդ փաստաթղթի ընդունումը եվրոպական միության կողմից Թուրքիային ներկայացված առանցքային պահանջներից մեկն է եղել: «Վերադարձման ենթակա գույք» հասկացությունը վերաբերելու է սրբերի անուններով գրանցված եկեղեցիներին, կրոնական հավատեղիներին, դպրոցներին, ինչպես նաեւ ծերանոցներին, մանկատներին եւ բժշկական հիմնարկներին: Եվրամիության ընդարձակման հարցերով հանձնակատար Օլի Ռենը ողջունել է Թուրքիայի խորհրդարանի ընդունած օրենքը: Հիշեցնենք, որ 70 միլիոն բնակչություն ունեցող հիմնականում մահմեդական Թուրքիայում ապրում են 65 հազար հայեր, ովքեր հայ Առաքելական եկեղեցու հետեւորդներ են, 23 հազար հրեաներ եւ շուրջ 2500 հույն-ուղղափառներ:

Տեւական նստացույց՝ «Գոնե, առնվազն 30000 հոգուց ոչ պակաս»

Լեւոն Տեր-Պետրոսյանն ու իր թիմակիցները երեկվա հանրահավաքում պահանջում էին՝ ԿԸՀ-ի կողմից ընտրությունների անվավեր ճանաչում, հանրային հեռուսաքննությունից ոտիր եթերի տրամադրում, ինչպես նաեւ ՀՀ դատախազությանը կոչ արեցին 24 ժամվա ընթացքում ձերբակալել բոլոր նրանց, ովքեր խոչընդոտել են ազատ եւ առաջադեմ ընտրությունների անցկացմանը, մասնավորապես նշելով. «Մխչյանցի մկան լակոտներին», «Նեմեց Ռուբոյին»՝ Ավանի օլիգարխին, Թոխմախի Մհերի փեսայի եղբոր տղային եւ այլոց: Բոլորի մեջ զարմանք առաջացավ, նաեւ ուրախություն, երբ հարթակ ելավ ՕԵԿ փոխնախագահ Հեղինե Բիճարյանը: Սակայն ի զարմանս ժողովրդի՝ ոչ թե Տեր-Պետրոսյանին միանալու կոչով հանդես եկավ, այլ ժողովրդին փոխանցեց ընտրատեղամասերում ընտրակեղծիքների վերաբերյալ իր տվյալները:

«Տեր-Պետրոսյանն ինձ հարցնում է, թե փակելո՞ւ եմ Փարահարը: Այո, փակելու եմ: Ես միշտ ասել եմ՝ եկեք, կանգնեմ մինչեւ վերջ: Ձեր մեջ կան եւ տղամարդիկ, եւ կանայք, որոնք նույնքես տղամարդ են: Հեռուսաեթերությամբ, թերթերով շնորհավորանքներ են ուղարկում Սերժ Սարգսյանին. սակայն հիշեցնեմ, որ Յանուկովիչին էլ շնորհավորեցին, բայց նա ոտքերիցս չդարձավ. Շեւարդնաձեին էլ շնորհավորեցին, որը նույնքես

ՏՈՒՆԵՐԻՑ

ոտիկոորոս) Կոմոյանը, ի տես ամբողջ ժողովրդի, հաղթական սրիոտիզ էր անում՝ կաթողիկոսը չմիջամտեց», ասաց հոնեսորներից:

Տեր-Պետրոսյանի թիմակից Նիկոլ Փաշինյանն էլ իր հերթին հայտարարեց, թե միակ ընդդիմադիր դեմքը Տեր-Պետրոսյանն է եւ իր շուրջը համախմբվածները. «Ժողովուրդ, տեսա՞ք չէ՞, որ մյուս թեկնածուներից ոչ մեկը չարձագանքեց ընտրակեղծիքների շուրջը բարձրացած մեր բողոքին: Եվ ուրեմն ասեմ, որ Սերժ Սարգսյանը գողացել է ընդդիմադիր կոչեցյալների՝ Արաքես Գեղամյանի, Վահան Հովհաննիսյանի ձայները: Բուսանդակ թեկնածուները ինչ էին ծառայում. գոնե նրանց ձայները չգողանային: Երբ 9/31 տեղամասում վերջնական արդյունքները ներկայացրին՝ պարզվեց, որ Սերժ Սարգսյանի ձայները վերահաշվարկից հետո 709-ից դարձել է 395 ձայն»:

Պահպանողական կուսակցության նախագահ Միհայել Հայրապետյանը դիմեց հանրահավաքին ներկա ուսանողությանը՝ դասադուլ անելու կոչով: Վերջինիս հայտարարությանը հավանություն տվեց նաեւ Տեր-Պետրոսյանը:

Թերեւս Տեր-Պետրոսյանի նախորդին խոսացած կարեւոր հայտարարությունն այն էր, որ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանը, գեներալ-լեյտենանտ Գագիկ Մելոնյանը հանդիպում են ունեցել իր հետ եւ հայտնել, որ իրենք կանգնած են ժողովրդի կողքին եւ պաշտպանելու են ժողովրդի վստահությանը արժանացած թեկնածուին եւ հայտարարել, որ թույլ չեն տա բանակը խառնվի հաղթականությանը ու դուրս գա ժողովրդի դեմ (ի դեմ, ՀՀՇ-ական լրտեսամիջոցների երեկվա հաղորդումներում խոսվի այս վերջին բառերը զեղչված էին): Տեր-Պետրոսյանը նաեւ տեղեկացրեց ժողովրդին, որ Մանվել Գրիգորյանը, Գագիկ Մելոնյանը բանակցություններ են վարում ՁՈՒ գլխավոր շտաբի պետ Սեյրան Օհանյանի հետ, նպատակն է փոխանցել գլխավոր շտաբի պետին, որ իրենք՝ որպես փոխնախարարներ կկանգնեն ժողովրդի կողքին:

Իսկ հանրահավաքի կազմակերպիչները, ի դեմս Տեր-Պետրոսյանի, պատասխանեցին վանքներ խփելու՝ մինչեւ լույս նստացույց են անելու:

ՆԱՐԻՊ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սեւանը սառույցի տակ

Անսովոր երեւույթ, թե սովորական ընթացք

Սեւանա լճի հիդրոլոգիական ռեժիմում զգալի տեղ են զբաղեցնում սառցային երեւույթները: Առաջին սառցային երեւույթները ձեւավորվում են աշնի մոտ, նոյեմբերի սկզբից: Ափամերձ սառույց Սեւանա լճում ձեւավորվում է ամեն տարի, սակայն լիովին հաստատուն սառույցով ծածկվում է ոչ միշտ:

Բաց լճի վրա սառույցը առաջանում է հունվարի երկրորդ կեսից մինչեւ փետրվարի 15-ն ընկած ժամանակահատվածում: Վերջին տարիներին լճի ջրի դարավոր պատարների օգտագործման պատճառով առաջին սառցային երեւույթները 15-17 օր ավելի շուտ են սկսվում, քան ձեւավորվում էին լճի բնական մակարդակի ժամանակ:

Երբ ռելեյեմբեր-փետրվար ամիսների ընթացքում օդի միջին ջերմաստիճանը -5.6 C-ից ցածր է, իսկ փետրվարին առանց ճամու եղանակի տեւողությունը կազմում է 100 ժամ եւ ավելի, ապա լճի վրա ձեւավորվում է հաստատուն սառցածածկույթ: Լիովին սառույցից սովորաբար ազատվում է մարտի վերջերից մինչեւ ապրիլի սկիզբը:

Սեւանա լճի մակարդակի իջեցման հետեւանքով էապես փոխվել են լճում տեղի ունեցող բոլոր գործընթացները: Մինչեւ մակարդակի իջեցումը, երբ կազմում էր 1915 մ, լճում կուտակված էր 7001012 կմ³ ջերմություն, որն ամբողջովին ծախսվում էր տարվա ցուրտ ամիսներին, եւ մակերեւութային սառույց առաջանում էր ոչ միշտ: Մակարդակի իջեցման հետեւանքով այդ էներգիան նվազել է եւ կազմում է 500 1012 կմ³: Ջերմության պաշարների նվազումը զգալիորեն ազդել է լճի սառցային ռեժիմի վրա, եւ եթե մինչեւ 1947-ը լիովին սառույցով ծածկվում էր 15 տարին մեկ անգամ, ապա 1948-ից հետո՝ 3-6 տարին մեկ անգամ, 1971-ից հետո՝ 2-3 տարին մեկ անգամ:

1890-ից լճում հաստատուն սառցածածկ նկատվել է. 1890, 1905, 1921, 1925, 1949, 1950, 1954, 1957, 1959, 1964, 1968, 1972, 1976, 1980, 1982, 1983, 1985, 1986, 1987, 1988, 1989, 1990, 1992, 1993, 1997, 2000, 2007 թվականներին՝ հունվարի վերջերից կամ փետրվարին:

Ըստ դիտարկումների պատմական տվյալների, ամենից շուտ Սեւանա լիովին սառել է 1957-ի հունվարի 22-ին, իսկ ամենից ուշ՝ 1959-ի փետրվարի 28-ին, ընդ որում ըստ տեւողության ամենաերկար սառցածածկույթ պահպանվել է 1972-ը՝ մոտ 75 օր:

Այս տարի՝ պայմանավորված ջերմային ցածր ֆոնով (նվազագույնը Մասիկում -28C, Գավառում -26C, Մարտունիում -21C, Սեւանում -17C) եւ անհողմ եղանակներով, Սեւանա լիճը հաստատած սառել է հունվարի 14-ից, որն ունի եւ դրական եւ բացասական կողմեր: Դրականն այն է, որ սառցածածկի պայմաններում գրեթե բացակայում է գոլորշացումը, որը հունվար ամսին օրական միջին հաշվով կազմում է 2 մլն խմ ջուր եւ եթե լճի սառցակալումը պահպանվի մինչեւ մարտի վերջը, ապա մոտ 100 մլն խմ ջուր լճից չի գոլորշանա: Սառցակալման հետեւանքով Սեւանա լճի մակարդակը մոտ 8 սմ-ով չի իջնի:

Բացասական կողմերից է այն, որ լճի վրա առաջացած մակերեւութային սառույցը խոչընդոտում է ջրում թթվածնի լուծունակությանը եւ պակասում է թթվածնի հանկությունը: Բացի այդ, սառցակալումը վնասակար է նաեւ ջրլող թռչունների համար, քանի որ վերջիններս հարկադրված կեր են փնտրում գեսաբերանների մոտ եւ որոշներին ավելի մաշելի են դառնում:

Լ. ԱԶԱՏՅԱՆ,
Հայդրոմետեոռոլոգիայի
ՕՏԵ հիդրոլոգիական
կանխատեսումների բաժնի պետ

Ուսանողները «դագանակ» Լեւոն Տեր-Պետրոսյանի նպատակների համար

Լեւոն Տեր-Պետրոսյանը երեկվա հանրահավաքում կոչ արեց ուսանողներին այսօրվանից դասադուլ սկսել: Նախկին նախագահը եւ նախագահի նախկին թեկնածուն իր քաղաքական նպատակներին հասնելու համար դիմել է ամենաաժգին միջոցներից մեկին՝ փորձելով օգտագործել երիտասարդներին: Հավանաբար, Լեւոն Տեր-Պետրոսյանը հիշել է 1988 թվականը եւ համազգային զարթոնքի տարիները, երբ սակայն դասադուլներ, գործադուլներ, հացադուլներ ու նստացույցեր արվում էին որպես համերաշխություն Արցախի մեր հայրենակիցների պայքարին, որպես բողոք ԽՍՀՄ իշխանությունների կողմից նույն ժողովրդի երկու հատվածների միավորմանը խոչընդոտելու: Իսկ հիմա՞... Հիմա արդեն նույն Լեւոն Տեր-Պետրոսյանը կոչ է անում ազատվել դարաբաղցիներից, իսկ դասադուլի կոչն էլ անում է անօրինական ճանապարհով իշխանության հասնելու իր նպատակների իրականացման համար: Նրան, բնականաբար, առանձնապես չի հուզում, թե ինչ խնդիրներ կունենան իրենց բռնիներում այն ուսանողները, որոնք լսելով նրա կոչը, կհրաժարվեն դասի գնալուց (ուսանողին միշտ էլ պետք է նման առիթ): Սակայն մի՞թե այդ ուսանողների ծնողները պատրաստ են թույլ տալ, որ իրենց երեխաները որպես «դագանակ» օգտագործվեն քաղաքական որեւէ ուժի կողմից:

Ա. Ա.

Հեղինակական դժգոհություն

Ընտրությունից հետո մարդիկ մտածում են, որ ամեն ինչ նորմալ հունի մեջ է մտնելու, սակայն սխալվում են: Առավոտյան ոմանք ետադարձում են աշխատանքի, ոմանք՝ դասի, բայց պարզվում է, որ մարզերից երեւան գնացող երթուղային տախտակներ չկան: Ինչ անի դասից ուշացող ուսանողուհին: Մի քանի ուսանողներ համաձայնության են գալիս, որպեսզի տախիով գնան դասի: Նրանք իրենց երկու օրվա տրանսպորտի գումարը ծախսում են, որ հաղթահարեն Արարատ-Երեւան ճանապարհը եւ ժամանակին հասնեն լսարան: Սակայն հասնելով երեւան, պարզում են, որ, ըստ խոսակցությունների, ժամը 15.00-ից հետո երեւանից դեպի մարզեր տրանսպորտ չի աշխատելու: Ուսանողուհին ետադարձում է ուսումնական հասատաություն, դասախոսից թույլտվություն խնդրում, որ առանց դասին մասնակցելու, վերադառնա տուն: Հակառակ դեպքում՝ գուցե ժամը 15.00-ից հետո մնա դրսում:

ՍԵՆԱ ԵՍԱՅԱՆ,
ԵՊՀՄ հեռուստաբարձրության
3-րդ կուրս

Մուսա լեռան ու Քեսաբին նվիրված գիտաժողով Լոս Անջելեսում

Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի հայ կրթական հիմնարկության արդի հայոց պատմության ամբիոնի նախաձեռնությամբ փետրվարի 29-ից մարտ 1-ը տեղի կունենա «Պատմական Հայաստանի քաղաքներն ու գավառները» շարքի 17-րդ գիտաժողովը, որը կնվիրվի Ղարսի մարզպանից մինչեւ Մուսա լեռ ու Քեսաբ տարածվող շրջանների պատմությանն ու մշակույթին: Գիտաժողովին կմասնակցեն Հայաստանից, Հոլանդիայից, Մեծ Բրիտանիայից, Սիրիայից, Ֆրանսիայից, ինչպես նաեւ Մ. Նահանգների մի շարք գիտական հիմնարկներից հրավիրած ուսումնասիրողներ: Բացման նիստը տեղի կունենա Հայ առաքելական եկեղեցու Արեւմտյան թեմի առաջնորդարանի Գալաթյան սրահում, որտեղ ներածական խոսքով հանդես կգա նշյալ համալսարանի արդի հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը, որից հետո ելույթ կունենա Քեսաբի մասին եռահատոր ուսումնասիրության հեղինակ Հակոբ Չոլաքյանը (Հալեպ):

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, դոկտոր Վերժինե Սվազլյանը կխոսի Մուսա լեռան բանահյուսության, իսկ փարիզաբնակ հայագետ Իգաբել Սեդա Մավյանը՝ 1909-1947 թթ. տեղի ունեցած դեպքերի վրա Քեսաբի ժողովրդի ունեցած հակազդեցության մասին:

Հաջորդ օրվա գիտական ելույթները կհնչեն անգլերեն, երկրորդ նիստի ժամանակ կլսվի դոկտոր Շուշան Փաթթի (Լոնդոն) «Դարխեն անգամ կատարյալ չէ. հուշեր Քեսաբից» վերնագրով զեկույցը, Սեդա Ալթունը (Հոլանդիա) կխոսի Սիրիայի Ճեզիրեի եւ Քեսաբի շրջաններում հայկական իմքնությունների կերտման մասին, իսկ Հակոբ Չոլաքյանը Քեսաբը կբնութագրի որպես սփյուռքի համայնք: Դոկտոր Հակոբ Փանոսյանը (Մուսա լեռ հայրենակցական միություն) եւ դոկտ. Հրայր Աթիկյանը (Քեսաբի կրթասիրաց) հանդես կգան Մուսա լեռան ու Քեսաբի բարքերներով կարճ ընթերցումներով ու դրանց մեկնաբանություններով: Սոնա Ձեյթլյանը (Լոս Անջելես) կներկայացնի Մուսա լեռան բանահյուսության վերաբերյալ իր հետազոտությունը, Արա Սողոմոնյանը կխոսի 1930-ականներին «Մուսա լեռան 40 օրը» վերտ ֆիլմի վերանորոգման ծրագրի սկզբնաղբյուրների եւ հոլիվուդյան գործունեության մասին եւ այլն:

Վերջին նիստում հանդես կգա դոկտ. Հրանտ Խալաթյանը (Սթենֆորդի համալսարան), որը կենթադրի մշակույթի եւ անհատի հարաբերության հարցերը՝ հիմնված Այնճարում կատարած իր դաշտային աշխատանքի վրա: Վերջում հանդես կգա Վահրամ Շեմսյանը. կներկայացնի Թուրքիայում մնացած միակ հայկական գյուղի՝ Մուսա լեռան Վագրֆի (Սամանտաղ) համառոտ պատմությունը:

Ռ. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 01 տարի
Գրանցիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հայրապետյան 47
Հեռ. 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱՎՈՒՇ ԱՎԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՎՈՒՇՅԱՆ / հեռ. 529221
Գեղարվեստական (գրական) / հեռ. 582960
Տպագրության պատասխանատու / հեռ. 581841
Գովազդային բաժնի պետ / հեռ. 582483
Շուրջբոլոր լրահոսի բաժնի պետ / հեռ. 529353
Գովազդային բաժնի պետ
«ԱԶԳ» թերթի
Թերթի նիստերի ամբողջական կամ մասնակի արտատպումները թույլատրվում են միայն կայքի հղումներով եղած դեպքում: Հղումը պետք է ունենա ինքնաշխատ գործարկման հնարավորություն: Գովազդային հոդվածներ գրառումները հանդիսանում են գովազդատուի գովազդային նյութեր: Գովազդատուի գրառումներ գրառումներ գովազդային նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ՍԵԿՍՈՒԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՑՈՒՄ

Ղարաբաղից մինչեւ Կոսովո

20 տարի առաջ այս օրերին Արցախում, ապա Հայաստանում սկիզբ առավ մի շարժում, որը վճռորոշ էր լինելու ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ ողջ տարածաշրջանի եւ մի ամբողջ կայսրության ճակատագրի համար: Այս շարժումը սկիզբ դրեց ինքնիշխան պետությունների հռչակման մի գործընթացի, որն իր տարածումը ստացավ ոչ միայն ԽՍՀՄ-ի, այլ նաեւ, այսպես կոչված, սոցիալիստական ճամբարի երկրների տարածքում: Կարող ենք ասել, որ Ղարաբաղյան շարժումը նոր շունչ եւ ոգի հաղորդեց էթնիկ ու կրոնական այն փոխհամաձայնություններին, որոնք տարիներ ու դարեր շարունակ գտնվում էին տարբեր երկրների ու ժողովուրդների տիրապետության տակ: Հայ ժողովրդի մղած ազգային ազատագրական պայքարն առաջացրեց նաեւ, որ նույնիսկ փոքրաթիվ ուժերով հնարավոր է հասնել հաջողության եւ ջախջախել մեծամասնակ բանակներ: Ինչեւէ, արդեն 90-ականներին պարզ էր, որ այս պայքարը դուրս է եկել նեղ, զուտ էթնիկ շարժման շրջանակներից եւ լայն ժողովրդական շարժման վերածվել, որը էականորեն փոխում էր ոչ միայն աշխարհի քաղաքական դեմքը, այլեւ մտածելակերպը: Արդեն պարզ էր, որ տարածքային ամբողջականության սկզբունքը չի կարող այլեւս տիրապետող լինել միջազգային իրավունքում: Մի կողմից՝ ազգային ազատագրական, հակառակ կողմից՝ անջատողական կոչվող շարժումը նոր քաղաքական մշակույթի ձեւավորման հիմք դարձավ: 90-ական թվականների երկրորդ կեսին, այսպես կոչված, քաղաքակիրթ աշխարհի հորինած միջազգային իրավակարգը բախվեց միջազգային իրավունքի նոր երեւույթի՝ չճանաչված պետությունների գոյությանը: Նախկինում այս փաստը ընկալվում էր որպես ժամանակավոր, որը, շատերի կարծիքով, վաղ թե ուշ լուծում կստանա ազատագրված տարածքները նախկին մետրոպոլիաների իրավական ու քաղաքական ազդեցության տակ վերադարձնելու միջոցով, այդ տարածքներին ինքնավարության հնարավորինս բարձր կարգավիճակ տալով: Սակայն ժամանակի ընթացքում այս մայնությունները սկսեցին փոխվել, արդեն այսօր պարզ է, որ իրենց ինքնիշխանությունը հռչակած պետությունները չեն պատրաստվում վերադառնալ նախկին կարգավիճակին: Անցած 20 տարիները ապացուցեցին նաեւ, որ թե՛ Արցախը, թե՛ Աբխազիան, թե՛ Հարավային Օսիան կամ Մերձդնեստրը կայացել են քաղաքականապես եւ տնտեսապես, նույնիսկ կարող են սեփական ուժերով ապահովել իրենց անվտանգությունը: Եթե նախկինում Արեւմուտքը մի միասնական քաղաքականություն էր որդեգրել չճանաչված պետությունների նկատմամբ, ապա ներկայումս կոսովյան իրադարձությունները էականորեն փոխեցին վերաբերմունքը պետական այդ միավորումների նկատմամբ: Թեեւ Արեւմուտքը շարունակում է պնդել, թե կոսովյան իրադարձությունները չեն կարող նախադեպային ընկալվել, սակայն պարզ է, որ դա իրականության հետ ոչ ընդհանություն ունի: Կոսովոյի անկախության ճանաչման փաստը, ինչը կատարվեց հակառակ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, հուշում է, որ աշխարհում սկսվում է պետությունների ճանաչման մի նոր գործընթաց: Պարզ է մի բան՝ Կոսովոն ճանաչված լինելով աշխարհի մի շարք տերությունների կողմից, միաժամանակ առանց Ռուսաստանի եւ Չինաստանի համաձայնության չի կարող դառնալ ՄԱԿ-ի անդամ: Սա նշանակում է, որ այսուհետեւ Կոսովոն կարող է գոյություն ունենալ որպես ոչ թե չճանաչված, այլ կիսաճանաչված երկիր, ինչը միջազգային քաղաքականության ու իրավունքի պրակտիկայում նոր երեւույթ է: Կոսովոն ճանաչել են եվրոպական մի շարք երկրներ՝ Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, սակայն հուժավում են ճանաչել Իսպանիան, Բելգիան, Հունաստանը, Կիպրոսը եւ այլն: Նույնիսկ վերջիններիս չճանաչման պայմաններում Կոսովոն կարող է դիվանագիտական հարաբերություններ հաստատել իրեն ճանաչած երկրների հետ, ինչը նշանակում է տնտեսական ու ռազմական ուղղակի օգնություն ստանալու նոր հնարավորություն: Քաղաքական այս պրակտիկայի նեոնումը ընդունելի է նաեւ ԱՊՀ տարածաշրջանում գոյություն ունեցող ինքնորոշված պետությունների եւ հատկապես Ղարաբաղի համար:

Այստեղ ոչ ոք չի կարող մեղադրել այս կամ այն պետությանը չճանաչված պետությունների ինքնիշխանությունը ընդունելու եւ նրանց հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար: Հասկանալի է, որ երկակի ստանդարտներով մոտեցումները ինքնահոչակ երկրների նկատմամբ չեն վերանա, սակայն պարզ է նաեւ, որ դարաբաղյան հարցի բանակցություններ վարելու փոխարեն Հայաստանի ներկա իշխանությունները պետք է կատարեն առաջին քայլը՝ ճանաչեն ԼՂՀ-ի անկախությունը: Այս քայլից հետո բանակցություններ պետք է սկսվեն Հայաստանի դաշնակից երկրների եւ հատկապես Ռուսաստանի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի հետ ԼՂՀ-ի անկախությունը ճանաչելու շուրջը: Ղարաբաղի ինքնիշխանության ճանաչման համար կան թե՛ իրավական եւ թե՛ քաղաքական ավելի շատ պատճառներ, քան Կոսովոյի դեպքում: Սակայն Ղարաբաղի անկախության ճանաչման համար ներկայումս կա մի կարեւորագույն ու հիմնական պատճառ, դա Ադրբեջանի հնարավոր ագրեսիան կանխելն է: Այսինքն՝ ճանաչելով Լեռնային Ղարաբաղի գոյությունը՝ լուրջ պատվար է դրվում ադրբեջանական հնարավոր հարձակման դեմ եւ նոր մակարդակի վրա է բարձրացվում Արցախի անվտանգությունը:

Կոսովոյի անկախության ճանաչումը աշխարհի տերությունների մի մասի կողմից աշխարհաքաղաքական նոր իրավիճակ է ստեղծում, ինչը նշանակում է, որ Հայաստանը հնարավորինս պետք է օգտվի այդ իրավիճակից եւ փորձի փակել դարաբաղյան հարցը մեկընդմիշտ:

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայ խաղաղապահները Կոսովոյում շարունակում են իրենց առաքելությունը

Փետրվարի 17-ին Կոսովոյի խորհրդարանը ընդունեց երկրամասի անկախության հռչակման որոշումը: 1999 թվականից ՄԱԿ-ի վերահսկողության տակ գտնվող Կոսովոյում, ի թիվս այլ երկրների խաղաղապահների, իր առաքելությունն է իրականացնում նաեւ խաղաղապահ հայկական ջոկատը:

Հայ խաղաղապահների հերթական հերթափոխը Կոսովո մեկնեց 2007-ի դեկտեմբերի 1-ին: Ինչպես **«Ազգին»** տեղեկացրեց պաշտպանության նախարարության մամլո քարտուղար **Սեյրան Շահսուվարյանը**, «Կոսովոյի ուժերի» գործողությունների շրջանակներում ՀՀ զինված ուժերի 12-րդ խաղաղապահ բրիգադից Կոսովո գործուղված ՀՈՒ զորախմբի 7-րդ հերթափոխի 34 հոգանոց կազմը շարունակում է իր առաքելությունը:

Ըստ այդմ, ամենօրյա կարգի շնորհիվ հասակ է, որ հայկական զորախումբը ոչ մի խնդիր չունի, ավելին, ըստ Շահսուվարյանի, հետու է խնդրահարույց տարածքներից այնպես, ինչպես որոշ հունական բրիգադը, որի կազմում էլ գործում է հայկական խաղաղապահ զորախումբը:

Կոսովոյում խաղաղապահ առաքելության հետագան բնավ հասակ չէ: Խնդիրն այն է, որ եվրոմիությունը մտադիր է ոչ միայն անմիջապես ճանաչել ինքնահոչակ նոր պետությունը, այլեւ դաստաստիկականապես ուժեր ուղարկել Կոսովո: Առաջիկա շաբաթ ԵՄ-ը Պրիշտինա կուղարկի 27 զինվորական, դատավորներից եւ դատախազներից կազմված հատուկ խաղաղացիական առաքելություն (EULEX): Ամեն դեպքում, եվրոմիությունը եւ ՆԱՏՕ-ն արդեն հանդես են եկել հայտարարությամբ՝ իրենց վրա վերցնելով Կոսովոյում անվտանգության ապահովման պատասխանատվությունը:

Թերեւս հետաքրքրական է, թե ինչ հեռանկար կարող է ունենալ Հայաստանի Կոսովոյում խաղաղապահ առաքելությունը: Ըստ ՊՆ կայքէջի, ներկայումս նախարարությունը բանակցություն է վարում Հայաստանի միջազգային խաղաղապահ գործունեությունն ընդլայնելու հնարավորությունների շուրջը: Մասնավորապես, ըստ կայքէջի տեղեկության, նախատեսվում է Կոսովոյում ՀՀ զորախմբի թվանակը դասակից հասցնել վաշտի:

Ա. ՏԱՐՈՒՏՅՈՒՆՅԱՆ

ՕՐՍԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 10.00-ին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում կազմակերպվում է «Հանդուրժողականությունը եւ ալյանսությունը հարավկովկասյան տարածաշրջանում» թեմայով միջազգային գիտաժողովը:

◆Ժամը 11.00-ին տեղի կունենա ՀՀ կառավարության նիստ:

◆Մեկ ժամ անց «Տեսակետ» ակումբի հյուրն է Շավարշ Քոչարյանը:

◆Ժամը 12.00-ին «Հայելի» ակումբի հյուրերը կլինեն Ալեխանդր Իսկանդարյանը եւ Ստեփան Սաֆարյանը:

◆Նույն ժամին «Փաստարկ» ակումբի հյուրն է հաղորդաշարի Լեւոն Մելիք-Շահնազարյանը: Թեման՝ «Կոսովոյի ՀՀ. համեմատություններ»:

◆Ժամը 13.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրերն են Փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Նիկոլայ Բաղդասարյանը եւ պալատի խորհրդի անդամ Հայկ Ալուժյանը:

◆Նույն ժամին «Տեսակետ» ակումբի հյուրն է Արման Մելիքյանը:

◆Ժամը 18.00-ին Արարատյան թեմի առաջնորդարանում տեղի կունենա ճնարկում Տ. Շմավոն քահանա Ղեւոնդյանի եւ երգիչ Համլետ Գետոզյանի մասնակցությամբ:

9,9 տկոս տնտեսական աճ հունվարին

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակել է 2008-ի առաջին՝ հունվար ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշները: Համաձայն դրանց, հունվար ամսին Հայաստանի տնտեսական աճը կազմել է 9,9 տկոս: Այդ աճի գերակշիռ մասը արձանագրվել է շինարարության հաշվին: Այս անգամ շինարարության ոլորտում արձանագրվել է 79,7 տկոս աճ նախորդ տարվա հունվարի համեմատ: Արդյունաբերական արտադրանքի ծավալը աննշան՝ 0,1 տկոսի անկում է արձանագրել: Արդյունաբերական արտադրանքն առանց էլեկտրաէներգիայի արտադրության ավելի մեծ՝ 4,3 տկոսի անկում է արձանագրել, իսկ ահա առանց ադամանդագործության արդյունաբերության մեջ այս տարվա հունվարին արդեն աճ է նկատվել՝ 1,9 տկոսի: Արդյունաբերությանը վերաբերող այս ցուցանիշերը խոսում են այն մասին, որ ադամանդագործության անկումը դեռ շարունակվում է: Արդյունաբերության մյուս ճյուղերում նույնպես հունվարին որոշակի անկում է արձանագրվել: Փոխարենը ավելացել է էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 7,8 տկոսով, ինչը պայմանավորված է ձմեռային սեզոնի գործոնով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը հունվարին գրեթե մնացել է անփոփոխ՝ աճն այստեղ կազմել է ընդամենը 0,2 տկոս: Որոշակի աճ կա ծառայությունների ոլորտում՝ 7,4 տկոս, իսկ մանրածախ առեւտրաշրջանառության աճը կազմել է 10,7 տկոս:

Արտաքին առեւտրաշրջանառությունն ավելացել է 29,4 տկոսով եւ կազմել 336,9 մլն դոլար: Առանց ադամանդի առեւտրաշրջանառությունն ավելացել է 36,6 տկոսով եւ կազմել 319,7 մլն դոլար:

Արտահանումը կազմել է 61 մլն դոլար, աճելով ընդամենը 2 տկոսով: Առանց ադամանդի արտահանումն աճել է 12,7 տկոսով եւ կազմել 52,7 մլն դոլար: Ներմուծումը կազմել է 275,9 մլն դոլար, աճելով 37,4 տկոսով, իսկ առանց ադամանդի՝ 267 մլն դոլար, աճելով 42,6 տկոսով:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունվարին կազմել է մոտ 84 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 104 հազար դրամ, բյուջետայինում՝ 61 հազար դրամ: Հունվարին գնաճը կազմել է 2,4 տկոս:

Ա. Մ.

«Որպես նախագահի թեկնածու ես ուրախ եմ, որ մենք չվերադարձանք հետ»

Հայտարարեց Արամ Հարությունյանը

«Այս ընտրությունները ցույց տվեցին, որ մեր ժողովուրդը բավականին իմաստուն է, կարող է վճռական պահին կատարել այնպիսի ընտրություն, որը երբեմն գուցե կես քայլ հետ չլինի: Ժողովուրդն, ըստ էության, պահի վճռական լինելը գիտակցեց եւ կատարեց ճիշտ ընտրություն», երեկ կուսակցության գրասենյակում հայտարարեց նախագահի նախկին թեկնածու Արամ Հարությունյանը՝ շնորհավորելով նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանին հաղթանակի կապակցությամբ: Նոր նախագահի հետագա ալիքներից Արամ Հարությունյանն ակնկալում է, որ նա կլինի բոլորի նախագահը, կմոռանա իր հասցեին ասվածն ու լսվածը եւ Հայաստանի համար այսօրվա մարտահրավերների վճռական փուլում կառաջնորդվի ազգային համաձայնությամբ:

Արամ Հարությունյանը թեեւ ինչ ձայներ է ստացել, բայց ուրախ է, որ հնին վերադառնալու վտանգը կանխելու առաջնորդ է այդպես եղել: «Թվաբանությունը կարեւոր չէ այդ տեսանկյունից, կարեւորը՝ ես ուրախ եմ, որ մենք չվերադարձանք հետ, եւ հավատակն իմաստով ժողովուրդը ճիշտ ընտրություն կատարեց», ասաց Արամ Հարությունյանը: Նա նշեց, թե ողջունել է Լեւոն Տեր-Պետրոսյանի վերադարձը քաղաքականություն՝ հույս ունենալով, թե կլինեն գաղափարական, ծրագրային բանավեճեր, ինչը սակայն տեղի չունեցավ: Նախկին թեկնածուն ուրախություն հայտնեց, որ ժողովուրդը կարողացավ մերժել այն գաղափարները, որոնք մերժել է նաեւ 1998-ին, եւ, փաստորեն, հնի վտանգն արդեն անցել է:

Ինչ վերաբերում է ընտրախախտումների դեպքերին, ընտրակեղծիքներին, Արամ Հարությունյանը ընդգծեց. «Մենք պետություն չենք ստեղծել, որ որեւէ մեկի ասելով անենք եզրակացություն: Ինչքան տեղյակ եմ, ընտրախախտումների վերաբերյալ հարցերը քննարկվել են տարբեր ատյաններում, իսկ ինչ վերաբերում է բռնություններին, նորից սա իրավապահների գործն է: Ես համոզված եմ, որ ընտրություններն անցել են ժողովրդավարաբար: Խախտումները՝ շատ հնարավոր է, եղել են, ընդ որում երկկողմանի է եղել»:

Հետընտրական զարգացումների մասով Արամ Հարությունյանը ասաց. «Շատ նորմալ է, որ, ասենք, Լեւոն Տեր-Պետրոսյանին ձայն տվածների մի մասը լինի փողոցում: Սա շատ բնական է, եւ ժողովրդավարությունը հենց սա է պահանջում, ուղղակի պետք է մնալ ժողովրդավարության սահմաններում: Հնի վերադարձի վտանգ օրինական ճանապարհով այսօր չկա, իսկ եթե անօրինական ճանապարհով լինի, ես կանգնած եմ պետականության հիմքերում, ես կանգնած եմ պետության կողքին եւ կանգնած եմ այսօրվա եւ ընտրված նախագահի կողքին, եթե այդ վտանգը լինի»: «Ազգի» հարցին, թե անօրինական ճանապարհով իր ասած հնի վերադարձի հնարավորությունը որքան է, ինչեր հետեւել պատասխանը. «Այլ տարբերակներով գալու հնարավորությունը ոչով չեմ համարում, որովհետեւ պետությունը, պետականությունը կայացած է, նաեւ ժողովուրդն իմաստուն է եւ այնքան մարդ, որ հրապարակում կա, դեռ չի նշանակում, թե այդքանը առաջին նախագահի հետեւից են գալիս: Ամբողջ խնդիրն այլակարծությունը հարգելն է»:

Գ. Գ.

Կոթողային աշխատություն միջազգային իրավունքի ասպարեզում

Մեր ընթերցողները տեղյակ են, որ օրերս Հայերի համաշխարհային կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի հովանու ներքո Մոսկվայում լույս է տեսել միջազգային իրավունքի հայտնի մասնագետ, դոկտ. Յուրի Բարսեղովի կազմած եւ խմբագրած կոթողային աշխատությունը՝ «Լեռնային Ղարաբաղը միջազգային իրավունքում եւ համաշխարհային քաղաքականության մեջ» («Нагорный Карабах в международном праве и мировой политике») գրքի առաջին հատորը. «Круг» հրատարակչատնից: 945 էջանոց այս հատորը հիմնականում փաստաթղթերի ժողովածու է՝ համապատասխան ծանոթագրություններով ու մեկնաբանությամբ, որը Հայերի համաշխարհային կոնգրեսի ու Ռուսաստանի հայերի միության հրատարակությունն է: Հիշեցնենք, որ պրոֆ. Բարսեղովը ղեկավարում է Ռուսաստանի հայերի միության կողմից գործող Միջազգային իրավունքի եւ քաղաքագիտության հայկական ինստիտուտը: Մեր ընթերցողները գիտեն նաեւ, որ նախորդ տարի Երեւանում, Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ գրքի պաշտոնական շնորհանդեսը, որի ընթացքում հնչեցին գնահատականի ու երախտագիտության խոսքեր պրոֆ. Յուրի Բարսեղովի եւ Հայերի համաշխարհային կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության, նրա նախագահ Արա Աբրահամյանի հասցեին:

Իսկ թե Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման ներկա կոնտեքստում եւ միջազգային-քաղաքական մթնոլորտում ինչ նշանակություն ու դեր կարող է ունենալ այս գիրքը, ստորեւ ներկայացնում ենք ՀՀԿ եւ ՈՀՄ նախագահ Արա Աբրահամյանի կարծիքը:

Հայաստանի հետ Ադրբեջանի եւ Թուրքիայի հարաբերությունների ողջ պատմությունը վկայում է, որ Ղարաբաղի հարցի փուլային լուծումը բացառված անընդունելի է: Թուրք-ադրբեջանցիները հենց առաջին փուլում եւ հաջորդած բոլոր փոնարկումներում կասեցրել են հիմնական հարցի լուծումը: Նման մոտեցումը վերաբերում է նաեւ այն բանին, թե Ադրբեջանը կարող է Ղարաբաղի բնակչությանը թույլ տալ ազատ հանրաքվե անցկացնել, հատկապես Ադրբեջանի սանձազերծած պատերազմից առաջ գոյություն ունեցած իրավիճակը վերականգնելուց հետո: Միայն անհեռատես քաղաքական գործիչները կարող են հաղթահարել նման տարբերակին:

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը ներկա կարգավիճակը ձեռք է բերել իր օրինական իրավունքով: Եվ այն այսօր չպետք է պայմանավորվի ոչ Ադրբեջանի հեռանկարային ագրեսիայի վերսկսման համար պլացդարմի, ոչ ադրբեջանական հասկացողի ինչ-որ իրավունքների վերականգնմամբ:

Արեւմտյան Հայաստանից, Կարսի շրջանից, Նախիջեւանից եւ հենց Ղարաբաղից հայ փախստականների նկատմամբ Ադրբեջանի եւ Թուրքիայի վերաբերմունքի ողբերգական ողջ փորձից պետք է ելնել ադրբեջանական «փախստականների» հարցին անդրադառնալիս: Հակառակ դեպքում, կստացվի ուղղակի աջակցություն էթնիկ զտման ու տարածքային զավթողականության թուրք-ադրբեջանական քաղաքականությանը:

Ներկա պատմական պահը հրամայաբար պահանջում է, որ մենք անհրաժեշտ եզրակացություններ անենք նաեւ այն հայ քաղաքական գործիչների վարագի նկատմամբ, որոնք կամ ոչ պոքեսիոնալության, կամ էլ հարմավորողականության պատճառով կոտրեն, առանց հայ ժողովրդի շահերի եւ օրինական իրավունքների ապահովման իրական երաշխիքների, ենթարկվեցին միջնորդների «ցանկություններին»:

Վերհիշենք 1919 թվականի իրադարձությունները: Ղարաբաղի համար մղվող պայքարում Անտանտի հաղթական գերտերությունների առումով քաղաքական անբարենպաստ վիճակում գտնվող մուսաֆաքական Ադրբեջանը իր պայմանները թելադրեց Կովկասում բրիտանական ռազմական հրամանատարությանը եւ արդյունքում սահմանվեցին ներկա սահմանները: Իսկ ինչ արեցին Անտանտի դաշնակից Հայաստանի Հանրապետության գործիչները: Նրանք իրենց պասսիվությամբ կոտրեն ենթարկվեցին իրենց դավաճանած անգլիական «դաշնակիցներին»:

Նույնը կրկնվեց կոմունիստների իշխանության ժամանակ, երբ Ն. Նարիմանովը եւ այլ նացիոնալ-կոմունիստներ Լենինին սպառնում էին Ադրբեջանում խորհրդային իշխանության տարածմամբ, իսկ Հայաստանում Ղարաբաղի հայերի ճակատագիրը որոշում էին՝ առաջնորդվելով, այսպես կոչված, համաշխարհային հեղափոխության հաղթանակի պատճառներով:

Մի քանի խոսք Ղարաբաղի բնակչության վերաբերյալ կեղծ տեղեկատվության տարածման մասին: Վիճակագրական տվյալների թուրք-ադրբեջանական կեղծիքները այսօր էլ ուղղակիորեն կատվում են ղարաբաղյան հարցի լուծման հետ, որը եւ փորձում են հրանցնել Հայաստանի ղեկավարությանը:

Դրա վառ վկայությունն է այն, որ Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեն նրանք փորձում են հետաձգել անորոշ ժամանակով, պատերազմի ընթացքում Ադրբեջան տեղափոխված ադրբեջանցիներին հայկական Ղարաբաղում վերաբնակեցնելուց հետո: Պարզ է, որ դա կարվի որոշ հակակշիռ Ղարաբաղի ինքնորոշվող հայերին: Վստահ եմ, որ մեր ժողովուրդը եւ Հայաստանի կառավարությունը երբեք տեղի չեն տա այս ակնհայտ խաբեությանը եւ հին սխալները չեն կրկնվի:

Մինչեւ ղարաբաղյան հիմնահարցի կարգավորումը զբաղեցված տարածքներից Ղարաբաղի ինքնապատասխանական ուժերի դուրսբերման առնչությամբ կցանկանայի նորից նշել պատմական փաստերը:

Թուրքերը 20-ական թվականներին ոչ միայն դուրս չբերեցին իրենց զորքերը Ղարաբաղից, այլեւ դիմեցին ահաբեկչության՝ կանգ չառնելով հայերի կոտորածի առաջ: Նրանք, խոսանալով տարածքային վեճերը լուծել ազգերի ինքնորոշման հիման վրա եւ ենթարկվել փարիզյան խաղաղության կոնֆերանսի որոշմանը, իրականում զոր մտցրեցին Արցախի ռազմավարական շրջաններ: Եվ այդ քայլերը, Հայաստանի Հանրապետության ղեկավարության լուռ համաձայնությամբ, Անդրկովկասում բրիտանական ռազմական առաքելության պահանջով ուղեկցվեցին Արցախից հայ կամավորականների զինված ուժերի դուրսբերմամբ:

Արցախի հարցի առնչությամբ գրեթե նման պահ է սեղծվել այսօր, եւ մենք պետք է խուսափենք սխալների կրկնությունից:

Այս ամենից պետք է մի պարզ հետեւություն անենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի ինքնորոշման եւ ազատության իրավունքը պետք է ճանաչել առանց որեւէ նախադայմանի, քանզի խոսքը վերաբերում է ոչ ավել, ոչ պակաս դարաբաղյան հայերի ֆիզիկական գոյատեւմանը:

Հայաստանը պետք է արցախյան հայերի իրավունքը պատշաճի հասատաղես եւ անգիջում՝ օգտագործելով թե՛ քաղաքական, թե՛ դիվանագիտական եւ թե՛ տեղեկատվական բոլոր հնարավորությունները: Այստեղ է, որ մենք պետք է աղալիենք մեր ժողովրդի ամոր կամքին եւ համախմբվածությանը:

Ժողովածուի փաստաթղթերից մի պատմական դաս եւս պետք է քաղել: 20-ական թվականներին ադրբեջանցիները, թե՛ մուսաֆաքական եւ թե՛ բոլշեւիկյան վարչակարգերի ժամանակ, միասնական ճակատով հասան Լեռնային Ղարաբաղի եւ հայկական հնամենի որոշ հողերի բռնագրավմանը: Դժբախտաբար, նույնը չենք կարող ասել մեր՝ հայերիս մասին: Այստեղ, մասնավորապես, նկատի ունեմ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի 1920 թվականի սեպտեմբերի գաղտնի հրահանգը, որ կուսակցական բոլոր կազմակերպություններին կոչ էր անում ինչպես թիկունքում, այնպես էլ ռազմաճակատներում «քայքայել հայկական գործող բանակը», «չկրակել հարձակվող թուրք զինվորների վրա», «չենթարկվել սպաների հրամաններին եւ անհրաժեշտության դեպքում ոչնչացնել նրանց» եւ այլն:

Ինչը կարող էր ավելի հրեավոր լինել, քան հայ ժողովրդի դահիճների հետ եղբայրացման այդ հրամանը: Եվ այդ դավաճանությունը տեղի էր ունենում այն ժամանակ, երբ Առաջին հանրապետության խիստ կարիքի մեջ գտնվող բանակը դիմակայում էր բոլշեւիկների միջոցով լավ զինված թուրք գավթիչներին:

Այսօր պատմական փորձը մեզ հուշում է, որ մեր ժողովրդի համար վճռորոշ յուրաքանչյուր հարցում մենք պետք է հանդես գանք միասնաբար, ընդհանուր ճակատով:

Մենք վստահ ենք, որ Հայաստանի նոր նախագահի աշխատակազմը, արտաքին գործերի նախարարության ղեկավարությունը, նաեւ սփյուռքի մասնակցությամբ, կակտիվացնեն արտաքին քաղաքականությունը դարաբաղյան հակամարտության հարցում: Այդ, կեղծարարության եւ նոպատակամղված ադրբեջանական սանձարձակ պրոպագանդային մենք պետք է անհրաժեշտ հակահավասարակշիռ:

Ադրբեջանական նավթով հարստացած Արեւմուտքում չեն ցանկանում ոչ տեսնել, ոչ լսել, թե ինչ մասշտաբների է հասել հակահայկական հիստերիան Ադրբեջանում: Չեն ցանկանում տեսնել ու լսել ցինիզմի այն դրսեւորումները, թե ինչպես են ադրբեջանցի ժողովրդի գիտակցության մեջ հիվանդագին աստիճանում մտցնում ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այսպես կոչված, անջատողականների, այլեւ ընդհանրապես հայերի, Հայաստանի, ամենայն հայկականի հանդեպ: Բայց պատմական փաստերը, պատմական հիշողությունը զորեղ են եւ չեն ջնջվում ոչ մի հիստերիկ քարոզչությունից: Այնուամենայնիվ, մենք չպետք է ձեռքերս ծալած նստենք ու սպասենք, այլ անհրաժեշտ է անել ամեն ինչ՝ պատմական ճշմարտությունը համաշխարհային հանրությանը հասցնելու համար: Այդ ամենի համար իրական հնարավորություն է ստեղծում այս ժողովածուն:

Մենք վստահություն ենք հայտնում, որ հայ ժողովուրդը, իր բոլոր հասվածներով, ազատարիկ եւ, մասնավորապես, Ադրբեջանի կարմանից քաղաքացիներին միահամուռ ցույց կտա Ղարաբաղի հայերի օրինական իրավունքները եւ հենց բուն Հայաստանի կենսական շահերը պաշտպանելու իր վճռականությունը:

Մենք Ադրբեջանի հետ հակամարտության խաղաղ եւ արդար կարգավորման կողմնակից ենք: Մենք ելնում ենք այն բանից, որ Հայաստանն ու Ադրբեջանը հարեւաններ են եւ պետք է ապրեն խաղաղությամբ ու համերաշխ: Հենց այդ ակնկալիով էլ ձգտում ենք փաստերի օբյեկտիվ արձանագրման եւ ժամանակակից միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների արդարացի հիմքի վրա Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորմանը:

Կոսովո-Մեսոխիան սերբական հայրենիքի անբաժան մասն է

Մի էջ հայ-սերբական բարեկամության նորագույն պատմությունից

Հայ հասարակագիտական-քաղաքագիտական միտքը, կառկելով արեւմտյան գործակիցներին, բազմիցս նման կրկնում է Կոսովոյի հարցի համանմանությունը Լեռնային Ղարաբաղի հարցին: Մինչդեռ իրավունքում նմանությունը Նախիջեւանի հետ է. Կոսովոյում կատարվեց հենց այն, ինչ անջրպետ դարի առաջին կեսին հայկական Նախիջեւանի հետ: Վերջին հարյուրամյակին բնավորելով հայոց հայրենիքի այդ հատվածում, բայց բուրգգիներն ու բոլոր ժամանակի ընթացքում հայաթափեցին այդ տարածքը՝ 1920-ականների սկզբին Բեռլական-խորհրդային դավադրությամբ այնտեղ հիմնելով Նախիջեւանի «ինքնավար հանրապետությունը»: Նույնն արեցին ալբանացիները սերբական Կոսովոյի հետ անցյալ դարի երկրորդ կեսին: Համանմանություն կա նույնիսկ տեղանունների հարցում. սերբերի համար գոյություն ունի սերբական Կոսովո-Մեսոխիա, հայերիս համար՝ հայկական Շարուր-Նախիջեւան:

Դրանք հանդիսանում թուրքական դարաշրջանի առաջին տուժել են երեք ժողովուրդներ՝ բալքարները, սերբերն ու հայերը: Վերջին երկուսն այսօր էլ շարունակում են «ճաշակել» թուրքական բարբարությունների հետեւանքները, մասնավորապես հայրենի տարածքների օտարումը, նոանցում տարասնկված պետություններով եւ պետական նոր կազմավորումների բերեւան գալով. Սերբիայում Կոսովոն, Հայաստանում՝ Նախիջեւանը, Ջավախքը, Թուրքիան եւ ուրագծվող բրդական պետական կազմավորումները:

Հայ-սերբական բարեկամությունն ունի դարերի պատմություն: Նա նոր իմպուլս ստացավ 1990-ական թվականներին հայ եւ սերբ ժողովուրդների հերթական ազգային-ազատագրական զինյալ պայքարի տարիներին: Այդ հարաբերությունների վերահաստատման ու ամրապնդման մեջ կարեւոր ներդրում ունեցավ Հայկական ժողովրդային շարժումը: Մտորեմ մի դրվագ հայ-սերբական բարեկամության նորագույն պատմությունից:

ՀՅՊ հովանավորությունը վայելող «Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ» կազմակերպության երկու մարտիկներ՝ Ռաֆֆի էլբեկյանն ու Անդրանիկ Պողոսյանը 1983 թվականին Բելգրադի կենտրոնում զգեստեցին Հառվալավիայում Թուրքիայի դեսպան Կալիոն Բալկարին: Գործողության վայրում պատահաբար հայտնված սերբ պահեստի մի սպա (եթե չեմ սխալվում՝ ազգանունը Պոպովիչ էր), կրակոցներ լսելով, առանց երկար-բարակ մտածելու, հանում է իր ատրճանակն ու կրակում հայ տղաների վրա՝ ծանոթեն վիրավորելով Անդրանիկ Պողոսյանին, որի հետեւանքով Պողոսյանը սայլակին գամված հաշմանդամ դարձավ (նա ավելի քան մեկ տասնամյակ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում):

Իմանալով սերբ սպայի հանդգնության «հերոսական» արարքի մասին, Թուրքիայի այդ օրերի բռնատեր գեներալ Քենան Էվրենը նրան պատշաճորեն հուշիում է Անկարա եւ նախագահական պալատում նրան շնորհում Թուրքիայի պետական բարձրագույն շքանշաններից մեկը:

Անցան տարիներ: Հառվալավիան սկսեց մասնատվել: Սկսվեց սերբ ժողովրդի՝ հանուն հայրենիքի վերամիավորման ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը խորվաթների, բոսնի իսլամացած նախկին ազգակիցների (բոշնակների) եւ սերբական հայրենիքի թափանցած ալբանացիների դեմ, որոնք լայն օժանդակություն էին ստանում (այսօր էլ են ստանում՝ առաջարկ) արեւմտյան ու մուսուլմանական երկրներից եւ ... Վատիկանից: Իհարկե, Թուրքիան եւս ակտիվորեն միացավ՝ առաջնորդված Բալկաններից լինական պայիսդ ձգվող պանթուրքական զառանցանքով: Այս իրողությանն ի տես, սերբ սպան անհանդուրժելի համարեց իր մոտ պահել թուրքական շքանշանը: Եվ մի օր նա հայտնվեց Բելգրադում Թուրքիայի դեսպանատան ճաղավանդակների մոտ, տեսախցիկների ու լրագրողների ներկայության թեզ թուրքական շքանշանի վրա եւ դա շորեց ճաղավանդակից դեպ:

Այս լուրը հայկական ժողովրդային շարժման միջոցով հասավ Լիբանան: Դա իմանալով, ՀՅԴ-ի Լիբանանի մասնաճյուղի անդամ մի հայ երիտասարդ ասկերիչ, ի նշան երախտագիտության, նախաձեռնեց եզակի մի մեդալի իրագործումը: Նա ցանկացավ, որ իր ստեղծագործածը կրկնօրինակ չունենա: Այդ նպատակով, նա մեդալի միակ օրինակը պատրաստելուց հետո փլացրեց կաղապարը: Եվ այսպես ծնվեց մոտ 30 գրամ քաշով ոսկե մեդալը, որի մեկ կողմում, հիշում եմ, քանդակված էր սերբական խաչը, մյուս կողմում՝ Մասիսները: Մեդալն ուներ «Հայ ժողովրդին սերբ ժողովրդից» արեւմտահայերեն մակագրությունը, առաջին երկու բառերը՝ մեդալի առաջին երեսում, մյուս երկուքը՝ երկրորդ կողմում քանդակված:

Հայ-սերբական բարեկամությունը խորհրդանշող մեդալը ՀՅԴ-ի Հունաստանի կենտրոնի միջոցով հասցվեց սերբ պահեստի սպային: Հայ տղաները հետագայում պատմում էին, որ մեդալն ափերում պահելով, նախկին զինվորականը բարձրաձայն լաց էր եղել անակնկալի պատճառած հուզմունքից...

Հավատում եմ, որ կանցնեն հայ եւ սերբ ժողովուրդների այս դառնագույն ժամանակները, երկու ճակատագրակից ազգերը կվերականգնեն իրենց հայրենիքի ամբողջականությունը եւ կբարեւնկեն իրենց հավերժի երթը՝ մնալով բարեկամ, հոգեհարազատ, եւ ինչո՞ւ չէ, նույնիսկ դաշնակից ընդհանուր թշնամիների դեմ պայքարում (1990-ականներին սակավաթիվ հայ երիտասարդներ կռվել են սերբերի կողքին):

ԳԵՎՈՐԳ ՍԵՍԱԿՅԱՆ

Մինչ մարդիկ զբաղված են ընտրություններով

Մինչ մարդիկ, մասնավորապես ամերիկահայերը, զբաղված են ընտրություններով՝ Ամերիկայում եւ Հայաստանում, ապխարհում այլ հետաքրքրական զարգացումներ էին տեղի ունենում, որոնցից մի քանիսը «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆԸ ներկայացնում է ընթերցողների ուշադրությանը՝

- Փոխնախագահ Դիկ Չեյնին եւ պաշտպանության քարտուղար Ռոբերտ Գեյթսը Թուրքիա են այցելելու մարտ ամսին մի խումբ բարձրաստիճան զինվորական եւ քաղաքացիական պաշտոնյաների ընկերակցությամբ: Նրանցից առաջ անցյալ շաբաթ Անկարայում էին գտնվում «Միացյալ ազգերի գործակալությունների ղեկավարների» փոխնախագահ, գեներալ Չեյմս Քարթրայթը, քարտուղարության գլխավոր գծով փոխտնօրեն Ֆրենկ Ուրբանչիչ կրտսերը եւ գլխավոր դատախազ Մայքլ Մուկասին: Հետաքրքրական է իմանալ, թե նրանք պարզապես իրենց պաշտոնում գտնվելու վերջին տարվա հնարավորությունի՞ն են օգտվում՝ ճանապարհորդելու հարկադրումների հաշվին, թե՞ մի նոր վտանգավոր արկածախնդրություն են մոգոնում Մերձավոր Արեւելքում:

- Երաստաղեմում գործող Հոլոքոստի եւ ցեղասպանության ինստիտուտի գործադիր տնօրեն պրոֆ. Իսրայել Չարնին նոր վերլուծական մի ուսումնասիրություն է գրել, որը խորհրդածելու տեղիք է տալիս: Մասնագիտությամբ հոգեբան պրոֆեսորն իր նոր «Մտավոր խանգարումների եւ Հոլոքոստի ու Հայոց ցեղասպանության նման բացահայտ ցեղասպանությունների ժխտման միջեւ գոյություն ունեցող հնարավոր հարաբերությունների հարցը» խորագրով ապխարհության մեջ փորձում է պարզաբանել, թե արդյոք այդ ոճրագործները տառապո՞ւմ են մտավոր հիվանդություններով: Ըստ նրա, «խելագարություն է պնդել, որ պատմական մի դեպք կամ իրադարձություն, որին ամբողջ ապխարհն է ծանոթ, տեղի չի ունեցել»:

Նրանց մեջ անուշադրության «հոգեկան խանգարումների երեւույթներ պետք է լինեն», համոզված է նա: Գուցե հայերիս համար այս ախտորոշումը նորություն չլինի, բայց լավ է, որ դրան անդրադառնում է հասապարհային ճանաչման արժանացած մի մասնագետ:

- Եվրոմիության պաշտոնյաների ճնշումների տակ թուրքական կառավարությունը ստստով խորհրդարանի քննարկմանն է ներկայացնելու չարաբաստիկ 301 հոդվածի վերամշակված տարբերակը, որը, մեր տվյալներով, առանձնապես չի տարբերվում նախկինից: Նոր տեսքը դարձյալ հետաքննելու է բոլոր նրանց, ովքեր վիրավորում են թուրք ժողովրդին, հանրապետությանը, պետությանը, խորհրդարանին, դատական մարմիններին, զինվորականությանը եւ ոստիկանությանը: Նոր տարբերակը խախտողներին 24 ամսվա բանտարկություն է սպասում: Դժվար է պատկերացնել, որ նման «օրենքներով» Թուրքիան հավակնում է մուտք գործել քաղաքակիրթ Եվրոպայի երկրների շարք:

- Չբավարավելով մուգ մաշկ ունեցող ամերիկացիներին իրենց նախնիներից (թուրք նավաստիներից, որոնց նավը խորտակվել է Մ. Նահանգների արեւելյան ափերի մոտ) սերած լինելու պնդումներով, որոնք թուրքերը այժմ պնդում են, թե իրենք բնիկ ամերիկացի հնդկացիների հարազատ այուսակիցներն են: Այս մասին է գրել Էլիֆ Օզմենեկը «Թրիիզ դեյլի նյուզ» թերթում, փորձելով նույնիսկ նմանություններ գտնել թուրքերենի եւ բնիկ ամերիկացիների լեզուների միջեւ: Հավանաբար ոգեւորված նման ապացույցներով, որոնք թուրքերը Նյու Յորքում վերջերս կայացած մի կոնֆերանսի ժամանակ (կազմակերպված Սամբուլի համալսարանի Ամերիկայում աղրող շրջանավարտների ասոցիացիայի կողմից) հարցրել են կազմակերպիչներին, թե արդյոք թուրքերը կարո՞ղ են ԱՄՆ այցելել իրենց նորահայտ ազգակիցների (ամերիկացի կարմիր հնդկացիների) հրավերներով: Կոնֆերանսի հեսին ծրագրի մասին զարմանք կազմելու համար բավական է նշել վերոհիշյալ ասոցիացիայի նախագահ Ալի Չինարի խոսքերը. «Մ. Նահանգների Սենատում 15 բնիկ ամերիկացի սենատոր կա: Ուստի այս կոնֆերանսը ես համարում եմ մի նոր, կարեւոր քայլ ուժեղացնելու թուրքական հարազատությունը Ամերիկայում եւ առավել մեծ աջակցություն ակնկալելու Սենատից»:

- Նորաստեղծ «Մ. Նահանգների ազերիների ցանցը» վերջերս հայտարարել է, որ «400 հազար անդամները» պաշտպանելու են հանրապետական թեկնածու Ջոն Մակքեյնին: Իհարկե, բոլոր ամերիկացիների նման այդ ամերիկաազերիներն ազատ են իրենց ընտրության մեջ, սակայն հարցն այլ է. նրանցից հանվոնն են Մ. Նահանգների քաղաքացի եւ հանվոնն իրավունք ունեն քվեարկելու: Հավանաբար սենատոր Մակքեյնը հույսը նրանց վրա չդնի՞:

Հարգ. Հ. Ծ.

Ասացինք՝ ոչ, էլի ...

Ադրբեջանի բողոքի նոտան՝ ԼՂ-ում տեղի չունեցած քվեարկության դեմ

Ադրբեջանի արտգործնախարարությունը բողոքի նոտա է հղել ԵԱՀԿ-ին, Եվրոպայի խորհրդին եւ Եվրոխորհրդարանին՝ «կատված Ադրբեջանի օկուպացված տարածքներում եւ Լեռնային Ղարաբաղում Հայաստանի նախագահի ընտրությունների առնչությամբ ընտրատեղամասերի եւ քվեարկության կազմակերպման եւ անցկացման հետ»: Բողոքի նոտայում նշվում է, թե Հայաստանը պետք է պարզաբանումներ տա Լեռնային Ղարաբաղում իբր տեղի ունեցած քվեարկության առնչությամբ:

Առավել հետաքրքրական է, որ ադրբեջանական արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, թե ստույգ տեղեկություններ եւ փաստեր կան «օկուպացված տարածքներում» Հայաստանի նախագահի ընտրությունների անցկացման մասին:

Միայն կուզենայինք հիշեցնել, որ դեռեւս փետրվարի 6-ին **«Ազգն»** անդրադարձել է ադրբեջանական իշխանությունների քարոզչական հերթական այս հնարքին եւ մեջբերել անգամ Ադրբեջանի սահմանադրության համապատասխան դրույթները, որոնք սահմանում են այդ երկրի քաղաքացիներին ներկայացվող պահանջները: Մասնավորապես, «Լեռնային Ղարաբաղում ընտրում են ԼՂՀ, եւ ոչ թե ՀՀ նախագահ: Բարվում այս մասին չգիտեն, չգիտեն անգամ երկրի սահմանադրությունը» հոդվածում նշել էինք, որ Հայաստանում ընտրությունների են մասնակցում Հայաստանի քաղաքացիները, եւ Ադրբեջանի քաղաքացիները, մեծագույն ցանկության եւ անգամ միջազգային կառույցների «հորդորների» դեպքում չեն կարող մասնակից դառնալ հայաստանյան ընտրական գործընթացներին: Նույն հաջողությամբ նրանք չեն կարող մասնակից լինել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրություններին, որոնց մասնակցում են միայն ԼՂՀ քաղաքացիները:

Ղարաբաղը ոչ մի առնչություն չունի Ադրբեջանի Հանրապետության հետ: Ավելին, Ղարաբաղի բնակիչներից ոմանք ունեն Հայաստանի քաղաքացիություն, ոմանք անգամ Միացյալ Նահանգների, եւ ուղղակի զավեշտալի է ադրբեջանական մոտեցումը, ասենք, ԱՄՆ քաղաքացուն Իլհամ Ալիեւի վերընտրության անալիզնրանք գործընթացին մասնակից դարձնելու հույսերի առնչությամբ:

Ինչ վերաբերում է Հայաստանի նախագահական ընտրություններին Լեռնային Ղարաբաղի բնակչության ենթադրյալ մասնակցությանը, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը վաղուց ընտրական իր գործընթացներն ունի, այնտեղ ընտրություններ են անցկացվում բնկպես հայաստանյան կամ ադրբեջանական ընտրություններից: եվ չնայած Ադրբեջանը չի ընդունում այդ ընտրությունները, այնուամենայնիվ, դրանք դե ֆակտո գործընթացներ են, որ կարգավորում են Լեռնային Ղարաբաղի կյանքն ու զարգացումը:

Հայաստանյան ընտրություններում էլ դարաբաղյան ծագմամբ քաղաքացիների մասնակցությունը լիովին համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին: Բոլոր նրանք, ովքեր ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն եւ ընտրելու կամ ընտրվելու իրավունք, այդ գործընթացի մաս են կազմում՝ կցանկանա դա Ադրբեջանը, թե ոչ:

ԱՌԱՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ժան Մարկոզին գնում է հոր հետքերով

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի որդին՝ Ժան Սարկոզին հայտարարել է, որ մտադիր է իր թեկնածությունը դնել Օ դը Սենի դեպարտամենտի տեղական խորհրդի ընտրություններում եւ դառնալ պատգամավոր:

Այս կառակցությամբ Ֆրանսիայում գործակալությունն արձանագրում է, որ Ժան Սարկոզին բռնում է 20 տարի առաջ հոր ընտրած ուղին:

Իրավաբանական ֆակուլտետի 21-ամյա ուսանող Ժանը պատգամավորության թեկնածու կառաջադրվի կառավարող Ժողովրդական շարժման միության կուսակցությունից, որի ղեկավարն էր հայրը երկրի նախագահ ընտրվելուց առաջ:

Սարկոզի կրտսերը վերջերս է հայտնել քաղաքական մեկնաբանների տեսադաշտում: Փետրվարի սկզբներին նա ձախողման մատնեց հոր հովանավորյալի՝ Ելիսեյան պալատի քարտուղար Դավիդ Մարտինոնի նախընտրական արշավը: Մարտինոնը հավակնում էր Նեյիի քաղաքապետի պաշտոնին:

Ժան Սարկոզին այն ժամանակ հրաժարվեց աջակցել Մարտինոնին, հայտարարելով, որ ինքն ուզում է Նեյիի քաղաքապետի պաշտոնում տեսնել որեւէ տեղացու եւ ոչ թե կողմնակի մարդու: Բացի դրանից, նա համոզված է, որ Մարտինոնը բոլոր հարցերում զիջում է մրցակիցներին: Ի վերջո Մարտինոնը հանել էր թեկնածությունը:

Ֆրանսիայում տեղական ընտրությունները պետք է անցկացվեն մարտին: Դիտորդները նշում են, որ կառավարող կուսակցության հաղթանակը խիստ կասկածելի է գործող նախագահի վարկանիշի ներկայիս անկման պատճառով:

«Նյու Յորք թայմսը» գրել է Մակքեյնի «լոբբիստական սիրավեպի» մասին



ԱՄՆ նախագահական ընտրություններում հանրապետականների գլխավոր թեկնածու, սենատոր Ջոն Մակքեյնի նախընտրական շտաբը հանդես է եկել «Նյու Յորք թայմսի» այն հոդվածի հերքումով, որտեղ պնդում է ասվում, թե սենատորն ութ տարի առաջ թերեւս սիրավեպ է ունեցել հմայիչ լոբբիստուհի Վիկի Այզմանի հետ:

Վաշինգտոնում Մակքեյնի նախընտրական շտաբի մամլո քարտուղար Ջիլ Հեյ Հեյզելբեյլերը տարածել է հայտարարություն՝ դատապարտելով հեղինակավոր թերթի «չափազանցությունների անկումը»:

Մամլո քարտուղարի խոսքերով, սենատորը թույլ չի տա, որ չարախոսները հանրության ուշադրությունը շեղեն ընտրարշավի խնդիրներից: «Այդ պատմության մեջ չկա որեւէ բան, որը կմատնանշեր, թե Ջոն Մակքեյնը երբեւիցե խախտել է իր կարիերայի գլխավոր սկզբունքները», նշվում է հայտարարության մեջ:

«Նյու Յորք թայմսի» հրապարակման համաձայն, 2000-ի նախագահական ընտրարշավի ժամանակ նախագահության թեկնածու Մակքեյնի օգնականներից ոմանք զարմացել էին սենատորի եւ ջահել լոբբիստուհի Այզմանի «ոռմանտիկ հարաբերություններից»:

Ներկայումս Ջոն Մակքեյնը 71 տարեկան է, Այզմանը՝ 30 տարեկան: Երկուսն էլ այժմ հայտարարում են, թե իրենք «ոռմանտիկ հարաբերություններ» չեն ունեցել:

Ներկայիս ընտրարշավում Մակքեյնին պաշտպանում են Հանրապետական կուսակցության 974 պատգամավորներ: Միասնական թեկնածու առաջադրվելու համար նա պետք է ստանա 1191 պատգամավորների աջակցությունը:

Մեծ Բրիտանիայում կբացվի անգլերենի թանգարան

Վինչեստրում մինչեւ 2012-ը կբացվի անգլերենի թանգարան: «Թայմս» թերթի տեղեկությունների համաձայն, թանգարանի ստեղծմանը մասնավորապես կմասնակցեն Բրիտանական թանգարանը եւ BBC կորպորացիան:

Թանգարանում կցուցադրվի անգլիական ցեղերի լեզուների՝ միջազգային հաղորդակցման ժամանակակից միջոցի վերածելու գործընթացը, ինչպես նաեւ մյուս լեզուների ազդեցությունն անգլերենի վրա:

Ապխարհում անգլախոսների թիվը մոտ 2 միլիարդ է: Ի հայտ են եկել անգլերենի տարաբաշխանային մի քանի տարբերակներ: Վինչեստրի ցուցադրանքը կլինի ապխարհում անգլերենի պատմությանը նվիրված առաջին թանգարանը: Դրա ստեղծման նպատակով կծախսվի 25 մլն ֆունտ ստեռլինգ:

Թանգարանը կբացվի 9-դ դարի բրիտանացի կառավարիչ Ալֆրեդ Մեծի ոսկե Վինչեստրում: Նրա օրոք ասվել է, որ անգլերենը գրական լեզվի կարգավիճակ ստացավ:

Չինաստանը պատճենել է «Սու-27» ռազմօդանավը

Չինաստանը կարողացել է պատճենել ռուսական «Սու-27» ռազմօդանավը: Մոսկովյան «Վեդոմոստի» թերթը հիշեցնում է, որ 1996-ին Ռուսաստանը ՉԺՀ-ին վաճառել է այդ տիպի 200 ռազմօդանավ: Նաեւ նախատեսվում էր Շենյա քաղաքում կառուցել գործարան, որտեղ J-11 կոչվող չինական ռազմօդանավեր էին հավաքվելու ռուսական բաղադրիչներով:

Չինաստանը ձեռք բերեց ռուսական 98 բաղադրիչ եւ հրաժարվեց մնացյալ 103-ից: J-11 արտադրող Չինաստանն ասելիքաբար ավելացրեց դրա արտադրությունում օգտագործվող չինական բաղադրիչների տեսակարար կշիռը: Չինացիներն անցյալում եւս կարողացել էին հաջողությամբ լուծել նման խնդիրներ, գրում է թերթը:

ՉԺՀ-ում «Ռոսօբորոնէքսպորտի» լիազոր ներկայացուցիչ Անդրեյ Պլոտնիկովը իր հերթին նշում է, որ չինացիները J-11-ի արտադրությունը յուրացնելով՝ սկսել են արտադրել սեփական ռազմօդանավեր, որոնք բաս նման են ռուսական «Սու-27»-ին: Taijet WS-10 բարձրիչների մեկնումն արդեն ավարտված է: Չինական նոր ռազմօդանավի բաղադրիչների 90 տոկոսը չինական է:

Հոբելյանական միջոցառումներ նվիրված Վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյակին



Ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների ընդարկում ցանկ է մշակվել: 2008-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ն հայտարարել է «սարոյանական տարի եւ անցկացվելիք միջոցառումների շրջանակում ՅՈՒՆԵՍԿՕ-ի նվագախմբի հյուրախաղերը կկայանան Հայաստանում: Հոբելյանական միջոցառումները կնկնարկեն փետրվարի 26-ին Ֆրեզնոյում Վ. Սարոյանի 100-ամյակին նվիրված «Շողակն» համույթի համերգով: Ասենք, որ գրողի հոբելյանն ըստ արժանվույն նշելու համար Ֆրեզնոյում ստեղծվել է կազմկոմիտե, որն էլ կիրականացնի մի շարք միջոցառումներ:

Ինչպես տեղեկացրեց ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, հոբելյանական երեկոն նախատեսված է անցկացնել հոկտեմբերին. Ալեխանդր Սոխենդիայանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Վիլյամ Սարոյանի ծննդյան օրը՝ օգոստոսի 31-ին Պանթեոնում հարգանքի տուրք կմատուցվի անվանի գրողի հիշատակին: Երեւանի Մաշտոցի պողոտայի եւ Մոսկովյան փողոցի խաչմերուկում կտեղադրվի Դավիթ Երեւանցու էսքիզներով ստեղծված Վ. Սարոյանի արձանը: ԳԱԱ ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո անցկացնելու է հոբելյանական գիտաժողով, որի նպատակն է լուսաբանել Վ. Սարոյանի ստեղծագործական ժառանգության ամենաարբեր ասպեկտները, դիտարկելով այն որպես մշակութային արժեք: Գիտաժողովի շրջանակներում նախատեսվում են զեկուցումներ եւ հաղորդումներ մի շարք թեմաներով՝ Սարոյանի գեղագիտությունը, հայոց ճակատագիրը Սարոյանի ստեղծագործություններում, Սարոյանը եւ իր ժամանակի ամերիկյան գրականությունը, Սարոյանի լեզուն եւ ոճը, դրամատուրգիան, Սարոյանը եւ կինոն: Սարոյանին նվիրված լուսանկարչական, գրահրատարակչական, արխիվային նյութերի ցուցահանդեսներում կներկայացվեն Հայաստանի ազգային արխիվում, Ե. Չարենցի անվան արվեստի եւ գրականության թանգարանում, ինչպես նաեւ «Սարոյանն ընտանիքում» կազմակերպության տեսանյութերը, լուսանկարները, փաստաթղթեր եւ այլ իրեր:

Հանրակրթական դպրոցներում կանցկացվեն Վիլյամ Սարոյանին նվիրված բաց դասեր երեւանում եւ մարզերում: «Այ Թի Ի» ՓԲԸ-ն նախատեսել է Վիլյամ Սարոյանին նվիրված ինտերնետային կայքէջի ստեղծում, որտեղ կզետեղվեն գրողի կյանքին ու ստեղծագործական գործունեությանը վերաբերող նյութեր: Նախարարության հայտարարած մրցույթի հիման վրա հանրապետության երկու թատրոններում կբեմադրվի Վ. Սարոյանի դեռեւս չթարգմանված եւ չբեմադրված պիեսները:

Սեպտեմբերին կանցկացվի հոբելյանական միջազգային թատերական փառատոն, որին կմասնակցեն Եվրոպայից, ԱՄՆ-ից, ՌԴ-ից հավիրված թատերախմբեր, որոնք կներկայացնեն Վ. Սարոյանի երկերի եւ պիեսների բեմադրությունները: Հոբելյանական գրքերի հրատարակության ցանկում ընդգրկվել են գրողի երկերի, պիեսների ժողովածուները, առանձին հատոր ուսերեն լեզվով, որոնցում կընդգրկվեն հայերեն չթարգմանված եւ չհրատարակված նյութեր: «Սարոյան-100» խորագրով սարոյանական հայտնի ասույթներով ցուցապաստառների պատրաստումը եւ տեղադրումն արդեն ավարտական փուլում է եւ մի քանի օրից դրանց ակնատեսը կլինենք: Իսկ Հանրային հեռուստատեսությամբ ու ռադիոյով կիեռարձակվեն ճանաչողական եւ ուսուցողական բնույթի հաղորդումներ ամբողջ տարվա ընթացքում: Նշեմ նաեւ, որ մեկ տասնյակ միջոցառումներ էլ կանցկացնեն տարբեր կինոփառատոնների, հանդիպումների ու կազմակերպությունների կազմկոմիտեները, որոնք նույնպես կնվիրվեն Վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյակին:

ՄԱՐԻՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Լույս է տեսել Պաղտասար Դպիրի ժողովածուն



Վերջերս Գրականության եւ արվեստի թանգարանի հրատարակչությունը տպագրել է «Պաղտասար Դպիր-տաղեր» ժողովածուն, որը Հենրիկ Բախչինյանի աշխատության հիման վրա է կազմվել: Ժողովածուն ընդգրկում է XVIII դարի վերջության խոշորագույն ներկայացուցիչ Պաղտասար Դպիրի որոշ բանաստեղծական ժառանգությունը: Բնագիրը կազմված է բանաստեղծի հրատարակած տպագրությունների եւ այլ տպագիր ու ձեռագիր աղբյուրների հիման վրա: Հատորում զետեղված են Պաղտասար Դպիրի կյանքն ու գործը ներկայացնող ընդարձակ ներածական, հավելվածներ, ծանոթություններ, ցանկեր: Վերջուց արդեն հասանելի է նաեւ Պաղտասար Դպիրի բանաստեղծական ժառանգության ակադեմիական հրատարակության հարը եւ հենց այս հատորով է հեղինակը տալիս այդ հարցի լուծումը: Հատորն ընդգրկում է տաղերգուի մեզ հայտնի բոլոր չափածո գեղարվեստական երկերը: Բնագրերը ժողովածուում ներկայացված են չորս բաժիններով: Առաջինում ընդգրկված է հեղինակի կազմած եւ հրատարակած առաջին ժողովածուն՝ Տաղարան Ա, 2-րդը՝ Տաղարան Բ, իսկ 3-րդում՝ Տաղարան Գ-ն, առանց այն տաղերի, որոնք տեղ են գտել նախորդ երկուսում: 4-րդ բաժնում համախմբված են այն տաղերն ու բանաստեղծությունները, որոնք գտնվում են Դպիրի հեղինակած եւ խմբագրած զանազան տպագիր գրքերում, ինչպես նաեւ տարբեր գրչագրերում: Զետեղված են նաեւ բանաստեղծի քառյակների եւ երկտողերի մի ընտրանի: Հեղինակի բնագրերին հաջորդում են երկու հավելվածներ՝ Պետրոս Ղափանցու ողբերգական ներբողը՝ գրված Պաղտասար Դպիրի մահվան առիթով եւ Մեսրոպ Վարժապետի հերոսական չափածո տաղանգիրը: Գիրքն ունի նաեւ ընդարձակ ներածական, որտեղ ներկայացրել ու ներկայացրել են բանաստեղծի ու գործչի կյանքի ուղին, գործունեության տարբեր բնագավառներն ու բանաստեղծական ժառանգությունը:

«Ազգի» ընթերցողներին ենք ներկայացնում Պաղտասար Դպիրի ծննդյան եւ մահվան ստույգ թվականները, որը հայտնի է դարձել Մաշտեղարանի ձեռագրերից՝ ծնվել է 1683 թվականին եւ մահացել 85-ամյա հասակում՝ 1768-ին: Իսկ թե նախնական կրթությունը երբ եւ ինչպես է ստացել, հայտնի չէ: Թե՛ իր երկարամյա մանկավարժական ու հրատարակչական եւ թե՛ գրական ու գիտական բեղմնավոր գործունեությամբ Պ. Դպիրը մեծ հմտության ու հարգանքի է արժանացել պոլսահայ եւ առհասարակ համազգային կրթական-մշակութային կյանքում: Նրա լեզվաբանական աշխատանքներից է «Ցանկ գիրք Նոր Կտակարանին» երկը, որը լույս է տեսել 1753-ին Պոլսում: Իսկ բանաստեղծական ժառանգության ամենաարժեքավոր մասն այն շարքն է, որը խորագրել է «Տաղիկներ սիրոյ եւ կարօտանաց»: «Պաղտասար Դպիրը՝ ժամանակի առաջավոր գաղափարների եւ ժողովրդական նվիրական իդեալների արտահայտիչը, կարողացել է միահյուսել հայ ճարտարգության տարբեր կենսունակ եղանակները եւ ստեղծել մի նորօրինակ ազգային բանաստեղծություն՝ դառնալով իսկապես նորարար երգիչ, հիմնելով բանաստեղծական մի ամբողջ դպրոց», բնութագրել է Հենրիկ Բախչինյանը:

Նշեմ, որ գիրքը տպագրվել է պոլսահայ անվանի կոմպոզիտոր Սիրվարդ Գարամանուկի եւ ամերիկաբնակ երախտավոր երաժիշտ Շահան Արծրունու մեկնաբանությամբ:

Ս. Ս.

ՀԻՇԵՑՈՒԹ ԽՈՍՔ

Լույս տալով ապառվեց

Եթե Դիոգենեսն իր լապտերով տեղափոխվեր մեր օրերը եւ ցերեկով մարդ փնտրեր, անշուշտ, բավարարված կլիներ՝ հանդիպելով բացառիկ այդ մարդուն, որն, ավաղ, այս տարի հրաժեշտ տվեց երկրային իր կյանքին՝ թողնելով միայն բարի անուն ու կարոտ, իմաստավորված կենսագրություն եւ համեստ ու արժանապատիվ կենսակերպ: Պարզապես չէր սիրում, երբ իր անունն էին հոլովում, չէր կարեւորում սեփական անձը, տալիս էր ու չէր վերցնում, նվիրում էր ու լռում...

Հայկական մարզական հանրագիտարանում կարդում ենք. «Հեքեյան Արսյոմ Տիգրանի (ծնվել է 1927թ. ապրիլի 5-ին, Դոնի Ռոստովում): 1951թ. տեղափոխվել է Երեւան եւ զբաղվել լուսանկարչությամբ: Թողակցել է հանրապետական մի շարք թերթերի, ապա 1956-1966թթ. աշխատել է «Հայաստանի Ֆիզկուլտուրնիկ» թերթում:

1956 թ. ԽՍՀՄ ժողովուրդների անդրանիկ սպարտակիադայում Հայաստանից առաջին մարզական լուսանկարիչ-թղթակիցն է եղել, որ լուսաբանել է այդ մրցումները: Ա. Հեքեյանը համավում է հանրապետության առաջին մարզական լուսանկարիչներից մեկը»:

Կռահեցիք՝ Աննա Հեքեյանի եւ Տիգրան Հեքեյանի հայրն է: Սակայն վերջինները ուղղում են ինձ՝ «սկզբից՝ նա, հետո՝ մենք, ոչ թե Տիգրանի հայրը, այլ Արսյոմի որդին»:

Փետրվարի 23-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը Արսյոմ (ավագանի անունը՝ Հարությունը) Հեքեյանի հիշատակին կայանալիք համերգի խորագիրը պատահական չէ. «Լույս ի լուսոյ». այդպես լույս տալով, բաժանելով ու շռայլելով սպառվեց նա, որի կյանքը նաեւ օրինակ է ու զուտ ապրելածելի դասագիրք: Իսկ անձնական որակների մասին երբեմ չեն խոսում հանրագիտարանները, ու ցավոք, այսօր նրա մասին խոսում ենք անցյալ ժամանակով: Ընկերներն ու ծանոթները, բարեկամներն ու հարազատները ասում են՝ նման անձնավորություն տեսած չկան, մարդ, որ միշտ պատրաստ էր տալ հասարակությանը, եթե իրենից պահանջում են, ընդհուպ կյանքը, մարդ, որ բարության միտար էր, ազնվության ու օրիակության մարմնացում:

Տակավին պատանի՝ 1944-ին զինվորագրվեց ու պատերազմի ավարտից հետո էլ եւս վեց տարի շարունակեց ծառայությունը Էստոնիայում, որտեղ կատարած սխրանքների շնորհիվ մեծ համակրանք է վայելել թե՛ տեղաբնակների, թե՛ զինվորների, թե՛ սպայական անձնակազմի շրջանում: Զորացրելուց հետո, տուն դառնալուց առաջ անցնում է ծննդավայրով, օգնում բոլոր նրանց, ովքեր իր կարիքն էին զգում, անվարձահատույց օգնական լինում ծանոթին ու անծանոթին: Նրա բարությունն անսահման էր, այլասիրությունը՝ անեզր: Տիկին Էլմիրան հիշում է՝ նոր էին ընտանիք կազմել, հանրակացարանում էին ապրում:

Անանոր էր, իրենց ռադիոընդունիչը պատուհանից իջեցրեց հնոցապանի սենյակ ու հանգիստ խղճով ասաց. «Գոնե ռադիո լսի Նոր տարուն, ոչինչ՝ մենք լուռ կգնանք»: Արդեն բնակարան են ստացել Կիեւյան փողոցում, հերթական Ամանորը ոչիսի դիմավորեն, Արսյոմը չկա: Եկավ կեսգիշերից հետո, հագուստը մոռ: Ճանապարհին մի անծանոթի մեքենա էր փչացել, ոչիսի ձեռ մեկնեի. «Սարեմ, գնաս հասնես ընտանիքիդ», ասել էր ու սարել: Սա է մարդու տեսակը: Օրինակները կարելի է շարունակել:

Ասում էր ցուցամոլությունն ու սնոբարարությունը, անտարբեր էր պարգեւների հանդեպ. թեեւ մեդալներ շատ ուներ, սակայն այդ մասին հետո են հառազատներն իմանում: Կամային հատկանիշներով անգերազանցելի էր, սկզբունքներ ուներ, որոնց հետեւում էր անդավաճան, նրա «այո»-ն ու «ոչ»-ը հաստատուն էին: Բացառվում էր կաբառել նրան: Միշտ կրկնում էր. «Ուրիշինը ոնը չէ»: Հոգով ազատ էր ու ըմբոստ, չէր հանդուրժում բռնություն, խորհրդային ռեժիմը մտաղաց էր համարում, որի դեմ ընդվզման լուռահատուկ ձեւեր ուներ: Խաղաղություն սերմանող մարդ էր, մարդկային ներդաշնակ հարաբերությունները առանձնահատուկ կարեւորություն ունեին նրա համար: Մասնատ Տիգրան Հեքեյանի հատերգներին գալիս էր աննկատ՝ ու հեռանում աննկատ՝ համեստորեն՝ խուսափելով ոռոյ հաստեղծ ուղղված գովեստներից ու հանդիսավորություններից:

Արսյոմ Հեքեյանը կյանքի վերջին տարիներին ատրեց իր ամառանոցում՝ ավելի մոտ բնությանը: Նա իր ափարին ուներ: Մշակում էր հողը, բարիք սանում ու բաժանում բարեկամին ու հարազատին, ծանոթին ու անծանոթին: Այս տարիներին սկսեց նաեւ անհագուրեն ընթերցել ու վերընթերցել ու հետո սկսեց բանաստեղծություններ գրել:

Արսյոմ Հեքեյանի ամենամեծ սերը երեխաներն էին. մանկավարժ չէր, բայց մանկավարժի հոգեբանություն ուներ, եւ երեխաներն էլ՝ բակի ու թաղի, իրեն էին պատշում. խաղեր էր հորինում նրանց համար, բացում նորանոր գույներ նրանց առջեւ: Ծնողների խնդրանքով «դժվար» պիտակ ունեցող երեխաների հետ զբաղվելով օգնում էր նրանց գտնել իրենց ճշմարիտ ուղին: Նույնիսկ եղել են դեպքեր, երբ իրավապահ մարմիններից իր պատասխանատվությամբ ազատել է պատանիների, ովքեր հետագայում գիտությունների թեկնածուներ, դոկտորներ եւ լավ հաղաքացիներ են դարձել: Անսահման սիրում էր թռչուններ ու կենդանիներ, ջերմությամբ էր պատմում իր շան՝ Կազբեկի մասին:

Ճշմարիտ հիսոնյային վայել կյանքով ապրեց, ապրեց բարոյական մի սկզբունքով՝ դիմացինին նեղություն չպատճառել: Կանխազգում էր մոտալուտ մահը, աղոթն անպակաս էր շուրթերից. այնուամենայնիվ, մահը իրեն չհաղթեց, ինը մահին հաղթեց, խնայող հեռացավ՝ հոգու լույսը բաշխելով ապրողներին:

ՍԱՏԵՎԱՆ ՍԱՏԵՎՅԱՆ

ՕԱԳՐԱՆԿԱՐՅԻ ԱՅՔԵՐՈՎ

Լրագրողի հոնորարը գրվածքի ծավալով չի չափվում

Հայ շախմատիստներից հինգը գլխավոր մրցանակի հավակնորդների թվում են

Վլադիմիր Հակոբյանի անդրանիկ հաղթանակը

Մոսկվայում ընթացող շախմատի «Սերֆլոտ» փառատոնի «B» եւ «C» մրցաշարերում ավարտական տուրից առաջ մի քանի հայ շախմատիստներ հավակնում են գլխավոր մրցանակին: «B» խմբի առաջատարներ Դավիթ Քալաջյանի եւ Լի Վանգի մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Երկուսն էլ վաստակեցին 6,5-ական միավոր: Նույնքան միավոր ունեն նաեւ բելառուսցի Վիկտոր Կոտրեյչիկն ու չին շախմատիստ Ցեն Վանգը: Ավարտական տուրում Քալաջյանը սեւերով խաղալու է Կոտրեյչիկի հետ, իսկ չին շախմատիստները մրցելու են միմյանց հետ: 7 շախմատիստներ նրանցից հետ են մնում կեսական միավորով, որոնց թվում է նաեւ Յուրի Համբարձումյանը: Վերջինս 8-րդ տուրում հաղթեց Նիկոլայ Օգնրբինին: Իսկ ահա 5 միավոր ունեցող Վահե Բաղդասարյանը պարտվեց Լեւ Դենիսովին եւ դուրս մնաց գլխավոր մրցանակի համար մղվող պայքարից: Նույնքան միավոր ունեն նաեւ Հովիկ Հայրապետյանն ու Դմիտրի Հարությունյանը:

«C» խմբի մրցաշարում գլխավոր մրցանակի հավակնորդների թվում են Վարդան Խոջայանը, Արթուր Ղարագյոզյանը եւ Խաչատուր Մեսրոպյանը, որոնք ավարտական տուրից առաջ ունեն 6,5-ական միավոր: Նրանք ընդամենը կես միավորով են զիջում աղյուսակը գլխավորող Անդրեյ Աբրամովին: Վերջինս հաղթեց Ռահիմ Պասիեւին: 8-րդ տուրում հաջողության հասան խոջայանն ու Ղարագյոզյանը, որոնք պարտության մատնեցին համապատասխանաբար Պավել Պոլոնսկուն ու Կոնստանտին Նիկոլոգորսկուն: Իսկ Մեսրոպյանը ոչ-ոքի խաղաց Վլեխսլ Վեսրովի հետ: 6 միավոր է վաստակել Տիգրան Սիմոնյանը՝ հաղթելով Ալեխանդր Պոլյակովին: 5,5-ական միավոր ունեն Սարգիս Սարգսյանն ու Առնոլդ Մինասյանը:

«C» խմբի ավարտական տուրում բավական հետաքրքրական մրցայարամ է սպասվում: Ղարագյոզյանը սեւերով խաղալու է առաջատարի՝ Աբրամովի հետ, իսկ Մեսրոպյանն ու խոջայանը մրցելու են միմյանց հետ: Սիմոնյանի մրցակիցը կլինի Պասիեւը:

Ուժեղագույնների մրցաշարում կայացել է 7-րդ տուրը: Հայ շախմատիստներից լավագույն արդյունքը կրկին Կարեն Ասրյանինն է (4,5 միավոր), որը ոչ-ոքի ավարտեց պարտիան Արայոմ Տիմոֆեեւի հետ: Մրցաշարի ամենաբարձր վարկանիշ ունեցող մասնակից Վլադիմիր Հակոբյանը վերջապես 6 անընդմեջ ոչ-ոքիներից հետո առաջին հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով ադրբեջանցի էլբայ Սաֆարլիին: Հակոբյանն իր օգտին 4 միավոր է գրանցել: Նույնքան միավոր ունի նաեւ Արսաբես Մինասյանը, որը ոչ-ոքի խաղաց Վիկտոր Բոլոգանի հետ: 3,5 միավոր է վաստակել Տիգրան Քոթանջյանը, որը հաղթեց Ֆաբիանո Ցարուանային: Օլաֆսոն-Փաշիկյան, Ալ Սահեդ-Անդրեասյան պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի, Մելոնյանը զիջեց Վիոռել Յորդաքեսկուին: Մեր երեք շախմատիստներն էլ վաստակել են 2,5-ական միավոր:

«B» մրցաշարի մեր երեք մասնակիցներ Լեւոն Բաբուջյանը, Սամվել Տեր-Սահակյանը եւ Դավիթ Պետրոսյանը մրցակիցների հետ խաղաղ դաշն կնքեցին: Այս եղյակից լավագույն արդյունքն ունի Դավիթ Պետրոսյանը, որի հաշվին 4 միավոր է գրանցված:

Մեսին «Բարսելոնին» կարեւոր հաղթանակ պարգեւեց

Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչ չորս հանդիպումներից երկուսում թիմերն այլի ընկան արդյունավետ խաղով: Դրամատիկ պայքարում ու երկուսեթ գոհերով այլի ընկավ «Սելթիկ»-«Բարսելոն» հանդիպումը: Շոտլանդիայի չեմպիոնը խաղի ընթացքում երկու անգամ հաշվի մեջ առջեւից եր ընթանում, սակայն ոչ միայն հաղթական հաշիվը պահպանել չհաջողվեց, այլեւ խաղադաշտը թողեց պարտված (2-3): «Բարսելոնի» տարած կարեւոր հաղթանակում իր մեծ ներդրումն ունեցավ Լիոնել Մեսին՝ խփելով 2 գոլակ: Գլազգոյում «Բարսելոնի» տարած հաղթանակը հաջորդ փուլի ուղեգրի նվաճման հարցում լուրջ հայս եր:

Թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Գորդոն Ստրաչան («Սելթիկ»)- Մենք խաղի հատուկ ծրագիր էինք մշակել եւ ձգտում էինք հարձակվել, սակայն անկախ մեր ցուցադրած խաղից, հաղթեց այն թիմը, որն ավելի լավ եր խաղարկում գնդակը: Այսօր շատ սխալներ թույլ տվեցինք, որոնք մեզ թանկ արժեցան: 2 գոլ խփել սեփական հարկի տակ ու պարտվել, դա ցավալի է: Կարծում եմ, «Բարսելոնն» աշխարհում ուժեղագույն կազմն ունի, սակայն ժամանակը ցույց կտա, թե իրականում թիմն ինչի է ընդունակ: Իսպանիայում կնգտնենք կրկնել հաջողությունը եւ կրկին գրավել մրցակցի դարպասը:

Յոհան Նեսկենս («Բարսելոնի» մարզիչ)- Շատ գոհ եմ մեր խաղից: Մենք լավ սկսեցինք խաղը, սակայն «Սելթիկը» գոլ խփեց՝ ցույց տալով, թե որքան վտանգավոր մրցակից է: Հաշիվը վերականգնելու համար հարկ եղավ կամք ու վճռակամություն դրսեւորել, ինչը մեզ շատ շուտ հաջողվեց: Ընդհանուր առմամբ, ողջ խաղի ընթացքում մենք գերազանց էինք նախաձեռնությունը եւ ի վերջո հասանք հաղթանակի: Մենք շատ ուրախ ենք այս հաղթանակի առթիվ, որը ձեռք բերվեց շատ ուժեղ թիմի հետ մրցավեճում:

Գրեթե նույն սցենարով ընթացավ «Ֆեներբահչե»-«Սեւիլիա» մրցախաղը: Միայն այն տարբերությամբ, որ հաղթանակ տարան դաշտի տերերը (3-2): Թուրքերին հաղթանակ պարգեւեց 87-րդ րոպեին Սեմիխ Շենքյուրի խփած վճռորոշ գոլը:

Թիմերի մարզիչների կարծիքն այսպիսին էր:

Ռիկո («Ֆեներբահչե»)- Մեր նպատակը հաղթելն էր եւ հասանք դրան: Շատ բարդ խաղ սպասվեց: Շնորհավորում եմ սաներիս, որոնք ուժերի գերազանց լարումով խաղացին, քանի որ «Սեւիլիան» ուժեղ թիմ է: Շատ դժվար էր մրցակցին հաղթելը, բայց մենք ավելի ուժեղ գտնվեցինք խպանացիներից:

Մանուել Հիմենես («Սեւիլիա»)- Շատ հիասթափված եմք: Առաջին իսկ րոպեներից ձգտում էինք հաղթանակի: Կարծում եմ, արժանի էինք դրան, սակայն պարտվեցինք: Թեեւ ինձ գոհացնում է, որ մրցինք: Թեեւ ինձ գոհացնում է, որ մրցակցի հարկի տակ 2 գոլ խփեցինք: Դա պատասխան խաղում մեզ որոշակի առավելություն է տալիս: «Ֆեներբահչեն» փորձառու եւ ուժեղ թիմ է եւ պատասխան հանդիպմանն անհամբերությամբ ենք սպասում:

Խաղավերջում վճռվեց նաեւ «Լիոնի» եւ «Մանչեսթր Յունայթեդի» մրցավեճի ելքը: 54-րդ րոպեին «Լիոնը» Բենզեմայի գոլի շնորհիվ հաշիվը, սակայն խաղաբացեց հաշիվը, սակայն խաղավարից երեք րոպե առաջ Տեւեսը հյուրերին փրկեց պարտությունից: Այդ գոլն Ալեխ Թերգյուսոնն անվանել է անչափ կարեւոր: Մարզիչների կարծիքը հետեւյալն է:

Ալեխ Պերեն («Լիոն»)- Շատ ցավալի է վերջին րոպեներին գոլ բաց թողնելը: Եթե խաղն ավարտվեր 0-0 հաշվով, արա հաջորդ փուլ դուրս գալու մեր հնարավորություններն ավելի գերադասելի կլինեին: Իսկ այժմ մեր առջեւ դժվարին խնդիր է ծառացած: «Լիոնը» հետաքրքրական ֆուտբոլ ցուցադրեց: Մենք հավակնած էինք գործում, այլի էինք ընկնում անհասկանալի գործողություններով: Հույս ունեի, որ խաղավերջում մեր թարմ ուժերը՝ Ֆերդը, Ասեմ Բեն-Արֆան եւ Մաթյե Բոդմեն կաջակցեն 2-րդ գոլը խփել, սակայն հաջողությունն ուղեկցեց մրցակցին:

Ալեխ Թերգյուսոն («Մանչեսթր Յունայթեդ»)- Այս խաղն ինձ հիշեցնում է մրցակիցների երեք տարվա վաղեմության հանդիպումը, որն ավարտվել եր 2-2 հաշվով: Այսօր «Լիոնը» շատ գեղեցիկ գոլ խփեց, ինչը մեծ լիցք հաղորդեց դաշտի տերերին: Բացի այդ, ֆրանսիացիները նաեւ հմտորեն էին պաշտպանվում: Կաղնու Տեւեսն ու Նանին օգնեցին հավասարեցնելու հաշիվը: Կարծում եմ, այժմ հաջորդ փուլ դուրս գալու լավ հնարավորություն ունենք:

Միակ խաղը, որում հանդիսակացները գոլի ականատես չեղան, «Արսենալ»-«Միլան» հանդիպումն եր: Պատասխան խաղերը կկայանան մարտի 4-5-ին, բացառությամբ «Հոտեր»-«Լիվերպուլ» հանդիպման, որը նշանակված է մարտի 11-ին:

ԼՈՆԴՈՆԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Անանդը ստանձնեց միանձնյա առաջատարի դերը

Լինարեսի մրցաշարի 5-րդ տուրում Լեւոն Արոնյանը սպիտակներով ոչ-ոքի ավարտեց պարտիան Ալեխսեյ Շիրովի հետ: Մրցակիցներն ընդամենը 18 քայլ կատարեցին, թեեւ դրանց վրա շատ ժամանակ ծախսեցին: 18-րդ քայլը կատարելուց հետո Արոնյանը հաշտություն առաջարկեց եւ Շիրովը, որին մինչեւ իսկիզ 40-րդ քայլը մնացել եր ընդամենը 40 րոպե, համաձայնեց: Արոնյանը 5 տուրից հետո ունի 3 միավոր:

Արոնյանի ոչ-ոքին հնարավորություն ընձեռեց Անանդին միանձնյա գլխավորելու աղյուսակը: Աշխարհի չեմպիոնը սեւերով մրցում եր Պետեր Լեկոյի հետ: Այդ մրցախաղում հնդիկ գրոսմայստերը կրկին դրսեւորեց վարպետությունը, թեեւ Լեկոն որոշ առավելություն ուներ պարտիայում: Բայց Անանդը կարողացավ հաստատուն օգտվել մրցակցի թույլ ված սխալներից եւ 45-րդ քայլին հերթական հաղթանակը տոնեց: Դա սեւ խաղաքարերով Անանդի արդեն 3-րդ անընդմեջ հաղթանակն էր: Հնդիկ շախմատիստը վաստակեց 3,5 միավոր:

2,5-ական միավորով հաջորդ տեղերում են Մագնուս Կառլսենը, Ալեխսեյ Շիրովն ու Վեսելին Թոփալովը: Վերջինս սպիտակներով պարտվեց Մագնուս Կառլսենին, որն իր անդրանիկ հաղթանակը տոնեց: Իսկ ահա Թոփալովն արդեն 2-րդ անգամ է պարտվում: Ռաջաբով-Իվանչուկ պարտիայում մրցակիցները 38-րդ քայլին խաղաղ դաշն կնքեցին: Լեկոն, Ռաջաբովն ու Իվանչուկը 2-ական միավորով եզրափակում են աղյուսակը:

Մեկօրյա հանգստից հետո այսօր մրցաշարի մասնակիցները կանցկացնեն 6-րդ տուրի հանդիպումները: Արոնյանը սպիտակներով ուժերը կչափի Պետեր Լեկոյի հետ: Կմրցեն նաեւ Թոփալով-Անանդ, Ռաջաբով-Կառլսեն, Իվանչուկ-Շիրով զույգերը:

Նալբանդյանը հաջող է մեկնարկել

Բուենոս Այրեսում ընթացող թենիսի միջազգային մրցաշարում հաջող է մեկնարկել Դավիթ Նալբանդյանը: Առաջին շրջանում նա միեւնույն 6-3 հաշվով երկու խաղադրույքում հաղթեց ավստրալացի Պիտեր Լուժակին: Ավելի համառ մրցայարամ ծավալվեց իտալացի Ֆաբիո Ֆոնինիի հետ մրցավեճում: Հաղթողին որոշելու համար պահանջվեց երեք խաղադրույք (7-6, 4-6, 6-3): Հաջողությունը կրկին ուղեկցեց Նալբանդյանին, որը մտավ քառորդ եզրափակիչ: Այդ փուլում հանդես կգան նաեւ Չելան, Ալմագրոն եւ Սարայեն:

Գիգզը նշեց 100-րդ խաղի հոբելյանը

«Մանչեսթր Յունայթեդի» կիսապաշտպան Ռայան Գիգզը «Լիոնի» հետ խաղում չեմպիոնների լիգայում (առանց հաշվի առնելու նախնական փուլի հանդիպումները) հոբելյանական՝ 100-րդ հանդիպումն անցկացրեց: Նա դարձավ 8-րդ ֆուտբոլիստը, որին հաջողվեց հասնել նման արդյունքի: Հիշեցնենք, որ առաջինը 100 խաղի սահմանագիծը հաջողվել է հասել Մադրիդի «Ռեալի» հարձակվող Ռաուլին, որը ներկայում 114 խաղ է անցկացրել:

1998/99-ին Ռայան Գիգզը Դենիզ Բեհիեմի հետ օգնեցին «Մանչեսթր Յունայթեդին» նվաճելու չեմպիոնների գավաթը «Բավարիայի» հետ եզրափակիչ մրցախաղում (2-1): Բացի այդ, Գիգզը միակ ֆուտբոլիստն է, որը չեմպիոնների լիգայի 12 խաղարկություններում անընդմեջ գոլի հեղինակ է դարձել: Անցած տարվա դեկտեմբերին նա 100-րդ գոլը խփեց Մրեմիեր լիգայում: Անցած մրցաշրջանում Գիգզը նաեւ Անգլիայի առաջնություններում հոբելյանական՝ 500-րդ խաղն է անցկացրել: Նա «Մանչեսթր Յունայթեդի» կազմում նորմուշը նետել է 1991-ի մարտին: Թեեւ Գիգզը 34 տարեկան է, սակայն մնում է թիմի առանցքային խաղացողներից մեկը: Յուրօրինակ «100-ի ակումբը» համալրելու լավ հնարավորություն ունեն նաեւ «Մանչեսթր Յունայթեդի» խաղացողներ Գերի Նեվիլն ու Պոլ Սքոուլզը, որոնք անցկացրել են համապատասխանաբար 99 եւ 98 խաղ:

Գինեսի ռեկորդների գրքին արժանի մրցախաղ

Կանադական Շերվուդ Պարկ բնակավայրում կայացավ տափօղակով հոկեյի աշխարհում ամենաերկարատեւ մրցախաղը: Երկու թիմեր, որոնցում 20-ական հոկեյիստներ էին ընդգրկված, բաց սահադաշտում 10 օր շարունակ հոկեյ էին խաղում եւ հանդիպումն ավարտեցին այն ժամանակ, երբ 1 ժամով գերազանցեցին երեք տարի առաջ իրենց իսկ սահմանած համաշխարհային ռեկորդը:

Այս մրցախաղն առաջին հերթին բարեգործական եր եւ նպատակ ուներ ֆինանսական միջոցներ հայթայթել երեխաների ուռուցքաբանական հիվանդությունների դեմ պայքարելու համար: Այդ պատճառով էլ թիմերից մեկը կոչվում եր «Արյաթինում», մյուսը՝ «Հույս» անվանումը: 2250-2223 հաշվով խաղը շահեց «Արյաթինումը»:

Ռեկորդային մրցախաղն անցավ կլիմայական անբարենպաստ պայմաններում: Խաղը սկսելու օրը -20 աստիճան եր եւ միայն վերջին օրերին գրանցվեց 0 աստիճան: Հանդիպման անցկացմանն աջակցեցին հարյուրավոր կամավորներ, որոնք խաղացողներին անհրաժեշտ բժշկական օգնություն էին ցույց տալիս, նրանց առաջնորդում էին տաք կեռակուրներով: Այդ յուրօրինակ մրցախաղի մասին տեղեկատվությունն ուղարկվելու է Գինեսի ռեկորդների գրքում գրանցվելու:

Սաբոնիսը հոգնել է

Լիտվացի նախկին լեգենդար բասկետբոլիստ Արվիդաս Սաբոնիսը, որ ներկայում Կաունասի «Ժալգիրիսի» նախագահն է, ինարավոր է վաճառի բաժնետոմսերի իր փաթեթը: Նա հայտարարել է, որ արդեն հոգնել է սնտեսական հիմնախնդիրներից, հովանավորների հետ բանակցելուց: Նա համաձայն է պարզապես լինել ակումբի նախագահը:

Լիտվական լրատվամիջոցներն անվանում են «ժալգիրիսի» հնարավոր նոր սեփականատիրոջ՝ մասնաբաժնի երկրի ամենահարուստ մարդկանցից մեկին՝ Դարյուս Մոցկուսին: Նրա ունեցվածքը գնահատվում է 700 մլն լիտ (մոտ 200 մլն եվրո): Կաունասում շուրջ 230 մլն լիտ (67 մլն եվրո) արժողությամբ նոր մարզակառույց է հիմնվելու եւ Մոցկուսը, որին է պատկանում շինարարական ֆիրմաներից մեկը, հույս ունի, որ շինարարության պատվերն իր ֆիրման կստանա:

Ներկայում «ժալգիրիսի» բաժնետոմսերի 38,5 տոկոսը Սաբոնիսինն է, 35 տոկոսը պատկանում է Կաունասի հիմնակառավարման մարմիններին, 14 տոկոսը՝ կոմերցիոն բանկին, 7,5 տոկոսը՝ թիմի հովանավորներին, 5 տոկոսը՝ «Ազովլիս» ֆիրմային:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Թուրքերը հաշտվել են Սերժ Սարգսյանի ընտրության անառարկելիության փաստի հետ

Մինչ Մասենադարանի հարթակից Լեռն Տեր-Պետրոսյանը, կասկածի ենթարկելով ՀՀ նախագահական ընտրությունների արդյունքները, նոր ընտրություններ էր պահանջում իշխանություններից եւ արդյունքների համար պատասխանատու էր ճանաչում միջազգային դիտորդներին, որոնցից իր կողմնակիցներին երթով առաջնորդի դեմի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքի մոտ, բայց եւ այնպես ընդգծել է. «Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը հայտարարեց, որ ընտրություններն ընդհանուր առմամբ անցել են առաջ, որտեղ էլ դրանք ունենան կատարելագործման որոշակի կարիք»:

Ինչ վերաբերում է նոր նախագահի պատասխանավատությամբ Հայաստանի թուրքական հարաբերության մեջ փոփոխությունների հավանականությանը, ապա վերոհիշյալ հեռուստատեսությունը կայքէջում գրում է. «Տարիներ շարունակ ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի նկատմամբ ագրեսիվ հարաբերություն վարող Ռոբերտ Քոչարյանի աջակցությունն ստացած նոր նախագահ Սարգսյանից չի սպասվում այլ մոտեցում Ղարաբաղի հետ հարաբերությունների առնչությամբ»:

Այդ առումով թուրքական հեռուստատեսությունը լրացնում է Ղարաբաղում գործող Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն, նախկին դեսպան Օմեր Էնգին Լութֆին: Նա փետրվարի 20-ին ինստիտուտի ամենօրյա բյուլետենում մասնակցել է. «Ինչ վերաբերում է Հայաստանի նոր նախագահի հնարավոր հարաբերությանը, ապա Սերժ Սարգսյանը հազիվ թե դրա առնչությամբ որեւէ հայտարարություն անի: Սակայն հաշվի առնելով այն, որ վերջին 10 տարիներին ինքը եղել է Քոչարյանի մերձավորագույն զինակիցը, դժվար չէ կռահել ընդհանուր գծերով վերջինի հարաբերությունները Թուրքիայի հետ հաշտանակի հետ հաշտվելու մոդուլով չէր ընդգծի դրա անառարկելիությունը: Թերեւս այդ առումով պատահական չէ, որ «Բուլլյուզ» թերթը փետրվարի 20-ի համարում ընտրությունների մասին տվյալները ներկայացրել է «Տեր-Պետրոսյանի ջախջախումը» ենթավերնագրով: Ավելին, թուրքական հանրային հեռուստատեսությունն անդրադառնալով Մասենադարանի նախորդ օրվա հանրահավաքին, թեեւ նշել է, որ 15 հազար մարդ բողոքի ցույց է կազմակերպել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքի մոտ, բայց եւ այնպես ընդգծել է. «Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը հայտարարեց, որ ընտրություններն ընդհանուր առմամբ անցել են առաջ, որտեղ էլ դրանք ունենան կատարելագործման որոշակի կարիք»:

Ինչ վերաբերում է նոր նախագահի պատասխանավատությամբ Հայաստանի թուրքական հարաբերության մեջ փոփոխությունների հավանականությանը, ապա վերոհիշյալ հեռուստատեսությունը կայքէջում գրում է. «Տարիներ շարունակ ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի նկատմամբ ագրեսիվ հարաբերություն վարող Ռոբերտ Քոչարյանի աջակցությունն ստացած նոր նախագահ Սարգսյանից չի սպասվում այլ մոտեցում Ղարաբաղի հետ հարաբերությունների առնչությամբ»:

Այդ առումով թուրքական հեռուստատեսությունը լրացնում է Ղարաբաղում գործող Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն, նախկին դեսպան Օմեր Էնգին Լութֆին: Նա փետրվարի 20-ին ինստիտուտի ամենօրյա բյուլետենում մասնակցել է. «Ինչ վերաբերում է Հայաստանի նոր նախագահի հնարավոր հարաբերությանը, ապա Սերժ Սարգսյանը հազիվ թե դրա առնչությամբ որեւէ հայտարարություն անի: Սակայն հաշվի առնելով այն, որ վերջին 10 տարիներին ինքը եղել է Քոչարյանի մերձավորագույն զինակիցը, դժվար չէ կռահել ընդհանուր գծերով վերջինի հարաբերությունները Թուրքիայի հետ հաշտանակի հետ հաշտվելու մոդուլով չէր ընդգծի դրա անառարկելիությունը:

Հետեւաբար կարծամամկես հեռանկարում սպասել, որ Ղարաբաղի ու Թուրքիայի հարցերում Հայաստանի հարաբերությունը լուրջ փոփոխությունների կենթարկվի, իրատեսական չէ: Դրանով հանդերձ, այս հարաբերությունը Հայաստանին մեկուսացման է տանում, ինչը կարող է ազդակ հանդիսանալ Սերժ Սարգսյանի համար, որ նա որոշ ժամանակ անց կարգավորման համար նոր ուղիներ որոնի: Սակայն կարգավորման ճանապարհին յուրահանչյուր առավելագույն զիջում բախվելու է ազգայնական հոսանքների գերիշխանության տակ գտնվող սփյուռքի եւ կառավարության մաս կազմող դաշնակների հակազդեցությանը: Թերեւս հետագա բանակցություններին նոպաստելու համար կարելի էր դաշնակներին չընդգրկել նոր կառավարության մեջ: Այս ընտրություններում Ռուսաստանն ակնհայտորեն աջակցել է Սերժ Սարգսյանին: Սա ենթադրում է Ռուսաստանի դերի պահպանումը, նույնիսկ ուժեղացումը Հայաստանի տնտեսության մեջ, ինչը կանդրադառնա նաեւ հարաբերության վրա: Այսպիսով, Հայաստանն էլ ավելի կապվինի Ռուսաստանին, քան ադրվինել է Քոչարյանի օրոք: Այս ամենով հանդերձ ակնհայտ է, որ Հայաստանը հեռանուս է լինելու ԵՄ-ի նոր հարեւանություն հարաբերությանը եւ ռուսական շահերին չհակասելու պայմանով շարունակելու է գործադրել ԱՄՆ-ի հետ լավ հարաբերություններ պահպանելու ջանքերը»:

Լյութֆի վերոհիշյալ խոսքերը մեկնաբանության կարիք չեն զգում: Պարզապես ընդգծում են այն փաստը, որ Թուրքիայի հարաբերությունները գիտակցելով ՀՀ նախագահական ընտրություններում Սերժ Սարգսյանի հաղթանակի անառարկելիությունը, հաշտվել են այդ փաստի հետ: Այդ առումով սակայն կարեւորը հարաբերական շրջանակները չեն, այլ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի շնորհավորական ուղերձը, որը երեկ նա հղել է Սերժ Սարգսյանին:

ՀԵՂՈՒՆ ՇԱՔԱԲՅԱՆ

1918-2008

Էստոնիան նշում է անկախության 90-ամյակը

Էստոնիան անկախ ու ժողովրդավարական հանրապետություն հռչակվեց 1918 թվականի փետրվարի 24-ին, որից հետո էստոնացիները կանգնեցին իրենց նորահռչակ անկախ երկրի սահմանները գերմանական ու ռուսական զորքերի գրոհից պաշտպանելու փորձության առջեւ: Գերմանիան շուտով պարտվեց Առաջին համաշխարհային պատերազմում, իսկ բոլշեւիկյան Ռուսաստանի հետ կնքվեց Տարտուի խաղաղության պայմանագիրը:

1940 թվականից ի վեր, մոտ 50 տարի Էստոնիայի հանրապետությունը գտնվեց սկզբում սովետական, այնուհետեւ գերմանական, հետո նորից սովետական օկուպացիայի տակ, որից վերջնականորեն ազատվեց 1991 թվականին՝ խորհրդային Միության փլուզումից հետո վերագտնելով իր անկախությունը:

Հայաստանում Էստոնիայի պատվո հյուպատոսի գրասենյակից ստացված հաղորդագրության մեջ նշվում են պատմական այն հանգամանքները, որոնց բերումով Էստոնիան հռչակվել է անկախ պետություն. «Ռուսաստանում 1917 թ. ստեղծված անկայուն վիճակը Էստոնիայի համար հնարավորություն ստեղծեց հասնելու անկախության: Դրա համար ազդակ էր ազգային ճակատի գործունեությունը, որը հենվում էր Մ. Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի գաղափարների վրա:

Մարտի 8-ին Էստոնացիները Պետրոգրադում կազմակերպեցին 40 հազարանոց խաղաղ ցույց, որը հասավ իր նպատակին՝ մարտի 12-ին Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը ստորագրեց Էստոնիայի ինքնավարության մասին օրենքը, որով Լիվոնյան 5 գավառներ միավորվեցին ինքնավարությանը: Առաջին անգամ Էստոնացի Յաակ Պոսկան նշանակվեց Էստոնիայի մարզի կոմիսար»:

Առ այսօր փետրվարի 24-ը լայնորեն նշվում է որպես Էստոնիայի պետության հիմնադրման օր: Անկախության 90-ամյակի կապակցությամբ այս տարվա տոնակատարությունները կլինեն էլ ավելի շքեղ: Պլարնու խաղաղի էնդլե թատրոնի դիմաց, որտեղ 90 տարի առաջ կարդացվել է անկախության հռչակագիրը, տեղի կունենա զինված ուժերի շքերթ:

Ռ. Պ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ սույն թվականի փետրվարի 15-ին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ՀՀ կենտրոնական բանկի գրանցման է ներկայացվել Կանոնադրության, «Դիտորդ խորհրդի եւ դիտորդ խորհրդի նիստերի մասին կանոնակարգում» եւ «Վերահսկիչ ծառայության մասին կանոնակարգում» փոփոխությունները եւ լրացումները:

Վերոհիշյալ փաստաթղթերը տեղակայված են «www.cba.am/Արժեթղթերի շուկա /Կարգավորում /ԻԿԿ փաստաթղթեր /Գրանցման ներկայացված կանոններ/Հայաստանի Ֆոնդային Բորսա» կայքում:

ԿԲ մամուլի ծառայություն

HYUNDAI MOTOR COMPANY-ի պաշտոնական դիտորդիբյուրոն

ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ ՓԲԸ-Ն ԵՎ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ

առաջարկում են ձեռք բերել *HYUNDAI* մակնիշի ցանկացած ավտոմեքենա հետեւյալ ապառիկային պայմաններով՝

Կանխավճար՝	*15 %*
Մարման ժամկետ՝	*7 տարի*
Տարեկան տոկոսադրույք՝	*12 %*

Հասցե՝ Ամառյան 60 Հեռ/ֆաքս՝ (374 10) 28 99 47/48, բջջ.՝ 37491/93 411 422
e-mail: magas@arminco.com

HYUNDAI՝ Ընտրիր քո ճանապարհը

ՀՀ ԱՄՆ Դեսպանատունը մրցույթի է հրավիրում

կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերություններին: Մրցութային փաթեթները կարող եք ձեռք բերել Ամերիկյան 1 հասցեում, ԱՄՆ դեսպանատան կենտրոնական մուտքից, փետրվարի 22, 29-ին, ժամը 9-18-ը:

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 21.02.2008 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	308.95
EUR	1	ԵՎՐՈ	455.45
RUR	1	Ռուս. ռուբլի	12.59
GEL	1	Վրաց. լարի	198.04

Հայտարարություն

2008 թվականի մարտի 21-ին հրատարակվել է ԿՀ թիվ 6(1113) համարը, որում հրատարակվել են.

- թիվ 184 հոդ. բաց մրցույթի մասին հայտարարություն
- թիվ 140 հոդ. ԱՄՆ-ի դեսպանատունի մասին հայտարարություն
- թիվ 27 հոդ. գնագրման մրցույթների մասին հայտարարություն
- թիվ 1 հոդ. հայտարարություն

Վերոհիշյալ տեղեկությունը եւ, ինչպես նաեւ www.gnumar.am եւ www.procurement.am հասցեներում փակցվելիք է ոչնչացման գնումների պատասխանող կազմակերպությունների ցանկը, որոնց կարող են հանձնարարվել տեղեկությունները տեղադրելու հանձնարարության գնումների համար կարգի վերաբերյալ:

www.azg.am

ՕՐԱԹԵՐԹ ՀԱՄԱՐ ՀԱՆԵՔՈՒՄԸՐԵԼ՝ 56-29-60

Լուսանկարները՝ իրենցինը՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայական՝ համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Անթեբեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրած է տպագրության՝ 21.02.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արաքելոց 2: